54. 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ ԲԴԽ անդամի պաշտոնում մեկական թեկնածու առաջադրելու իրավունք ունեն խմբակցությունները: Թեկնածուն առաջադրվում է խմբակցության որոշմամբ: Որոշման մեջ պետք է նշվեն ԲԴԽ-ին անդամակցելու համար առաջադրված թեկնածուի եւ նրան առաջադրելու իրավունք ունեցող խմբակցության ներկայացուցչի անունը եւ ազգանունը: Որոշմանը պետք է կցվեն Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված պահանջների նախատեսված համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը բարեվարքության հետ կապված հարցերի վերաբերյալ թեկնածուի լրացրած հարցաշարի¹ հետ միասին: Սահմանադրության կամ օրենքի պահանջները չկատարելու դեպքում Ազգային ժողովի նախագահը երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշումն ու կից փաստաթղթերը վերադարձնում է խմբակցությանը՝ նշելով պատճառները: Սահմանադրության եւ օրենքների պահանջները պահպանելու դեպքում Ազգային ժողովի նախագահը մեկ աշխատանքային օրվա ընթացքում բարեվարքության հետ կապված հարցերի վերաբերյալ լրացված հարցաշարը ներկայացնում է ԿԿՀ՝ տասնօրյա² ժամկետում դրա վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն ստանալու համար: 6) ԲԴԽ-ի անդամի ընտրության հարցը քննարկվում է կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով, Ազգային ժողովի նիստում այն ժամկետում, որի ընթացքում ապահովվում է ԲԴԽ-ին անդամակցելու համար

¹ Տվյալ պահանջը ներկայացվել է 2020 թվականի մարտի 25-ին:

² Նույն տեղում:

թեկնածուների վերաբերյալ ԿԿՅ-ից խորհրդատվական եզրակացության ստացումը, ինչպես նախատեսված է 2-րդ մասով, որը վերաբերում է ԲԴԽ անդամակցության համար թեկնածուներին: 7) ԲԴԽ-ի անդամն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդով: 8) Եթե քվեարկությանը մասնակցել է երկուսից ավելի թեկնածու, եւ նրանցից ոչ մեկը չի ընտրվել, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առաջին փուլում առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: 9) Եթե որեւէ թեկնածու չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնի համար խմբակցությունները կարող են ներկայացնել ԲԴԽ անդամի նոր թեկնածու:

55. 53-րդ հոդվածը սահմանում է, որ Ազգային ժողովի նիստերը հրապարակային են:

Ե. «Հանրային ծառայության մասին» օրենքը (2018թ.)

56. «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11.2 կետը սահմանում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին արգելվում է որեւէ ձեւով ազդեցություն գործել հավատարմագրային կառավարչի վրա կամ միջամտել հավատարմագրային կառավարման գործընթացին:

2. Կանոնակարգ ստեղծելու վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումը (ԲԴԽ-68-Ն-15, 2020 թվական)

57. Վերոնշյալ փաստաթղթի 93-րդ կետը սահմանում է, որ դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը քննելիս ԲԴԽ-ն առաջնորդվում է Դատական օրենսգրքով կամ Վարչական դատավարության օրենսգրքով այն դեպքում, երբ նշված դատավարական հարցը չի կարգավորվում Դատական օրենսգրքով:

Է. Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ի որոշումը «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի եւ 155-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ

58. Սույն որոշմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 175-րդ հոդվածի իմաստով ԲԴԽ-ն ունեւր դատավորին կարգապահական պատասխանատււթյան ենթարկելու հարցը որոշելու բացառիկ իրավասւթյուն: Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործող սահմանադրական եւ իրավական կարգավորումների համատեքստում բացակայում է դատավորին կարգապահական պատասխանատււթյան ենթարկելու վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումները ՀՀ-ում գործող դատարաններից որեւէ մեկի առջեւ բողոքարկելու օրինական հնարավորւթյունը, քանի որ այն կարող էր անհամատեղելի լինել ԲԴԽ-ի՝ որպես անկախ սահմանադրական մարմնի կարգավիճակի հետ: Բացի այդ, որոշումների վերանայումը դուրս է Հայաստանի Հանրապետւթյան դատարանների սահմանադրական գործառույթների շրջանակից, ինչի շնորհիվ կարգավորվում է դատավորին կարգապահական պատասխանատււթյան ենթարկելու հարցը: Սույնով Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատււթյան ենթարկելու հարցը որոշելիս ԲԴԽ-ն հանդես է եկել որպես դատարան՝ Սահմանադրւթյանը եւ այլ օրենքների համապատասխան, իսկ դատավարական երաշխիքները, ինչպիսիք են ողջամիտ ժամկետում գործի քննւթյունը, օրենքի եւ դատարանների առջեւ հավասարւթյունը, դատական վարույթի հրապարակայնւթյունը եւ դատական ակտերի պարտադիր բնույթն ընդհանուր առմամբ, ուղղված էին Սահմանադրւթյան 61-րդ եւ 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացումն ապահովելուն: Սույնով Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ դատավորին կարգապահական պատասխանատււթյան ենթարկելու վերաբերյալ ԲԴԽ-ի որոշումների դատական վերանայման հնարավորւթյան բացակայւթյունը բխում էր գործող սահմանադրական իրավական կարգավորումներից եւ չէր խախտում անձի՝ դատական պաշտպանւթյան եւ արդար դատաքննւթյան իրավունքը:

Ը. Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 17-ի որոշումը «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի եւ 2-րդ մասի՝ Սահմանադրւթյանը համապատասխանելու վերաբերյալ

59. Վերոնշյալ որոշման մեջ Սահմանադրական դատարանը, ի թիվս այլնի, նշել է, որ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի իմաստով ԲԴԽ-ն միակ մարմինն է, որը որոշում է դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը: Այս կերպ Սահմանադրությունը պաշտպանում է դատական համակարգն այլ պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց միջամտությունից՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պարտականությունը վստահելով միայն ԲԴԽ-ին, որի սահմանադրական առաքելությունն է ապահովել դատական իշխանության անկախությունը:

II. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆՅՈՒԹԵՐ

60. Համապատասխան միջազգային իրավունքը եւ գործելակերպը նշված են Բական ընդդեմ Հունգարիայի [ՄՊ] (*Baka v. Hungary*), [GC], թիվ 20261/12, §§ 72-87, 2016 թվականի հունիսի 23), Օլեքսանդր Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի [Oleksandr Volkov v. Ukraine] (թիվ 21722/11, §§ 78-80, ՄԻԵԴ 2013), եւ «Ռուսթավի 2 հեռուստաընկերություն» ՍՊԸ-ն եւ այլք (վերելում հիշատակված, § 224) գործերում:

Ա. Դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքները

61. 2001 թվականի՝ Դատավորների վարքագծի բանգալորյան կանոնագրքի նախագիծը (այսուհետ՝ Բանգալորյան սկզբունքներ) ընդունվել է Դատական բարեվարքությունն ամրապնդելու հարցերով դատական խմբի կողմից եւ վերանայվել 2002 թվականի նոյեմբերին Հաագայում անցկացված՝ գլխավոր դատավորների կլոր սեղանի շուրջ հանդիպման ժամանակ: Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական եւ սոցիալական խորհուրդը (ԷԿՕՍՕՍ) 2006 թվականին ընդունել է «Դատավորների վարքագծի հիմնական սկզբունքների ամրապնդում» 2006/23 բանաձեւը, որով ամրագրել է Բանգալորյան սկզբունքները: Դրանում պարունակվող համապատասխան սկզբունքներն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«ԱՐԺԵՔ 2. ԱՆԱԶԱՌՈՒԹՅՈՒՆ

Սկզբունք. Անաչառությունն Էական նշանակություն ունի դատավորի

պարտականությունների պատշաճ կատարման հարցում: Այն վերաբերում է ոչ միայն բուն որոշմանը, այլև որոշում կայացնելու գործընթացին:

Կիրառումը.

2.5. Դատավորն ինքնաբացարկ է հայտնում այն վարույթում մասնակցությունից, որում նա չի կարող որոշում կայացնել անաչառորեն, կամ որում անկողմնակալ դիտորդին կարող է թվալ, որ դատավորը չի կարող որոշում կայացնել անաչառորեն ... [ը]նդ որում, դատավորի ինքնաբացարկը չի պահանջվում, եթե գործը քննելու համար չի կարող ձեւավորվել որեւէ այլ տրիբունալ, կամ եթե հրատապ հանգամանքներում գործողություն չձեռնարկելը կարող է պատճառ դառնալ արդարադատության ոչ պատշաճ իրականացման համար: ...»:

62. 2007 թվականի մարտին Դատական բարեվարքությունն ամրապնդելու հարցերով դատական խումբն ընդունել է Բանգալորյան սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունը: Դրա համապատասխան մասերն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«90. Հանգամանքներից կախված՝ կանխակալության ողջամիտ կասկած կարող է առաջանալ՝ ա) եթե դատավորի եւ գործում ներգրավված հանրության որեւէ անդամի միջեւ առկա են անձնական ընկերական կամ բարեկամական հարաբերություններ, ...»:

Բ. Եվրոպայի խորհրդի նյութերը

1. Դատավորների կանոնադրության մասին եվրոպական խարտիա

63. 1998 թվականի հուլիսի 8-10-ն ընդունված՝ Դատավորների կանոնադրության մասին եվրոպական խարտիայի համապատասխան մասերն³ ունեն հետեւյալ բովանդակությունը.

«1.3. Դատավորի ընտրության, հավաքագրման, նշանակման, կարիերայի առաջընթացի կամ պաշտոնավարման դադարեցման վրա ազդող ցանկացած որոշման մասով Կանոնադրությունը նախատեսում է գործադիր եւ օրենսդիր իշխանություններից անկախ մարմնի միջամտությունը, որի շրջանակներում դատավորի պաշտոնը զբաղեցրած անձանց առնվազն կեսն ընտրվում են իրենց գործընկերների կողմից՝ համաձայն այն մեթոդների, որոնք երաշխավորում են դատական իշխանության առավել ընդգրկուն ներկայացվածությունը:

...

5.1. Դատավորի կողմից Կանոնադրությամբ հստակ սահմանված պարտականություններից մեկի կատարման թերացումը կարող է սանկցիա առաջացնել միայն կողմերի լիարժեք լսումն ապահովող վարույթի շրջանակներում, որում դատավորը, որի դեմ առկա է վարույթ, ունի ներկայացված լինելու իրավունք՝ այնպիսի որոշման հիման վրա, որն ընդունվել է այնպիսի տրիբունալի կամ մարմնի առաջարկությամբ, խորհրդով կամ համաձայնությամբ, որի անդամների առնվազն կեսն ընտրված դատավորներ են: Կիրառելի սանկցիաների չափը սահմանված է Կանոնադրությամբ, եւ դրանց կիրառությունը հիմնված է համաչափության սկզբունքի վրա: Գործադիր մարմնի, տրիբունալի կամ սանկցիա նշանակող մարմնի որոշումը սահմանված կարգով ենթակա է բողոքարկման ավելի բարձր դատական ատյանում»:

³ Ընդունվել է 1998 թվականի հուլիսի 8-10-ն ընկած ժամանակահատվածում Ստրասբուրգում կայացած հանդիպմանը՝ եվրոպական երկրներից եւ դատավորների երկու միջազգային ընկերակցություններից ժամանած մասնակիցների կողմից (կազմակերպվել է Եվրոպայի խորհրդի հովանու ներքո): Խարտիան հավանության է արժանացել 1998 թվականի հոկտեմբերի 12-14-ն ընկած ժամանակահատվածում Կիեւում Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների գերագույն դատարանների նախագահների հանդիպման, ինչպես նաեւ 1999 թվականի ապրիլի 8-10-ն ընկած ժամանակահատվածում Լիսաբոնում անցկացված՝ քսանհինգ եվրոպական երկրների արդարադատության նախարարությունների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ:

2. Նախարարների կոմիտե

64. Նախարարների կոմիտեի՝ դատավորների վերաբերյալ (անկախություն, արդյունավետություն եւ պատասխանատվություն) անդամ պետություններին ուղղված CM/Rec(2010)12 առաջարկության համապատասխան մասերը (ընդունված՝ Նախարարների կոմիտեի կողմից Փոխնախարարների 2010 թվականի նոյեմբերի 17-ի 1098-րդ հանդիպման ժամանակ) ունեն հետեւյալ բովանդակությունը.

«Գլուխ IV. Դատական իշխանության հարցերով խորհուրդները

...

27. Այդ խորհուրդների ոչ պակաս, քան անդամների կեսը պետք է լինեն դատական իշխանության բոլոր մակարդակներից իրենց գործընկերների կողմից ընտրված դատավորներ՝ պահպանելով դատական համակարգում բազմակարծության սկզբունքը:

...

Գլուխ VI. Դատավորի կարգավիճակը

Ընտրությունը եւ կարիերան

...

46. Դատավորների ընտրության եւ կարիերայի վերաբերյալ որոշումներ կայացնող մարմինը պետք է լինի գործադիր եւ օրենսդիր իշխանություններից անկախ: Այդ անկախությունը երաշխավորելու նպատակով այդ մարմնի անդամների առնվազն կեսը պետք է լինեն իրենց գործընկերների կողմից ընտրված դատավորներ:

47. Այնուամենայնիվ, եթե սահմանադրական կամ այլ իրավական դրույթներով սահմանվում է, որ պետության ղեկավարը, կառավարությունը կամ օրենսդիր իշխանությունն է կայացնում դատավորների ընտրության եւ կարիերայի վերաբերյալ որոշումները, ապա մեծամասամբ դատական իշխանության ներկայացուցիչներից կազմված անկախ եւ իրավասու մարմինը պետք է օժտված լինի առաջարկություններ ներկայացնելու եւ կարծիքներ արտահայտելու լիազորությամբ (չհակասելով IV գլխում սահմանված՝ դատական իշխանության հարցերով խորհուրդների նկատմամբ կիրառելի կանոններին), որոնց պետք է գործնականում հետեւի համապատասխան նշանակող մարմինը:

48. 46-րդ եւ 47-րդ պարբերություններում նշված անկախ մարմինների կազմում պետք է ապահովված լինի հնարավորինս լայն ներկայացուցչություն: Դրանց ընթացակարգերը պետք է լինեն թափանցիկ, եւ դիմումատուների խնդրանքով վերջիններս պետք է տեղեկացվեն որոշումների կայացման պատճառների մասին: ...

Գլուխ VII. Պարտականություններ եւ պարտավորություններ

...

Պատասխանատվությունն ու կարգապահական վարույթը

...

69. Կարգապահական վարույթ կարող է հարուցվել դատավորների կողմից իրենց պարտականությունները արդյունավետ եւ պատշաճ կերպով չկատարելու դեպքում: Այդ կարգապահական վարույթը «պետք է իրականացվի անկախ մարմնի կամ դատարանի կողմից՝ ապահովելով արդար դատաքննության բոլոր երաշխիքները եւ դատավորին տալով որոշումը եւ պատիժը բողոքարկելու իրավունք»:

3. «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով)

65. Վենետիկի հանձնաժողովի՝ դատարանների եւ դատավորների վերաբերյալ «Արդարադատության խորհուրդ» վերնագրով (CDL-PI (2023)020) կարծիքների եւ զեկույցների ժողովածուն ունի հետեւյալ բովանդակությունը (ծանոթագրությունները բաց են թողնված).

«IV. Արդարադատության խորհուրդներ

«...Հարգելով իրավական համակարգերի այս բազմազանությունը՝ Վենետիկի հանձնաժողովն առաջարկում է, որ պետությունները դիտարկեն անկախ դատական խորհուրդ կամ նմանատիպ մարմին ձեւավորելու հարցը, եթե դեռեւս չեն դիտարկել այն: Ամեն դեպքում խորհուրդը պետք է ունենա բազմակարծիք կազմ, որը զգալի չափով, եթե ոչ մեծամասամբ, բաղկացած է դատավորներից: Բացառությամբ ի պաշտոնե անդամների՝ այս դատավորները պետք է ընտրված կամ նշանակված լինեն իրենց գործընկերների կողմից:

CDL-AD(2010)004, Դատական համակարգի անկախության մասին զեկույց, Մաս I. Դատավորների անկախությունը, §32

...

«... Միայն դատավորներ ներգրավելը հղի է ինքնապաշտպանության, սեփական շահերի եւ նեպոտիզմի գաղափարի առաջացման վտանգով: Ինչ վերաբերում է դատական խորհրդի կազմին, ապա պետք է խուսափել թե՛ քաղաքականացումից եւ թե՛ կորպորատիվից: Անհրաժեշտ է պատշաճ հավասարակշռություն ապահովել դատավոր եւ դատավոր չհանդիսացող անդամների միջեւ: Կառավարության այլ գերատեսչությունների ներգրավումը չպետք է անհարկի ճնշման սպառնալիքներ առաջացնի խորհրդի անդամների եւ ամբողջ դատական իշխանության անդամների համար»:

CDL-AD(2016)007, Օրենքի գերակայության վերաբերյալ ստուգացուցակ, §82

...

«... Զաղաքականացումից կարելի է խուսափել, եթե Պառլամենտից պարզապես պահանջվի հաստատել դատավորների կողմից կատարված նշանակումները»:

CDL-AD(2002)021, Լրացուցիչ կարծիք Ռումինիայի վերանայված Սահմանադրության մասին, §22

...

«...Դատական խորհրդի կազմի Էական մասը կամ անդամների մեծամասնությունը պետք է ընտրվի դատական իշխանության կողմից: Դատական խորհրդի ժողովրդավարական օրինականությունն ապահովելու համար մյուս անդամները պետք է ընտրվեն Պառլամենտի կողմից համապատասխան իրավական որակավորում ունեցող անձանցից՝ հաշվի առնելով շահերի հնարավոր բախումը»:

CDL-AD(2007)028, Վենետիկի հանձնաժողովի կողմից կազմված՝ Դատավորների նշանակման մասին զեկույց, §29

...

4.2.2 Խորհրդի դատավոր անդամներ եւ դատական գործունեություն չիրականացնող անդամներ. պատշաճ հավասարակշռության պահպանումը

«... Դատական խորհուրդների գլխավոր դերը դատական իշխանության անկախության անկախ երաշխավոր լինելն է: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ այդ խորհուրդները դատական «ինքնակառավարման» մարմիններ են: Կորպորատիվից եւ քաղաքականացումից խուսափելու համար անհրաժեշտություն է առաջանում վերահսկելու դատական իշխանությունը դատական խորհրդի՝ դատավոր չհանդիսացող անդամների միջոցով: Բարձրագույն դատական խորհրդի անդամների նշանակման հավասարակշռված մեթոդի դեպքում միայն կարելի է երաշխավորել դատական իշխանության անկախությունը: Կորպորատիվը պետք է հակակշռվի այլ իրավական մասնագիտություններ ունեցող անդամների՝ դատական համակարգից «օգտվողների» անդամությամբ, օրինակ՝ փաստաբաններ, դատախազներ, նոտարներ, իրավագետներ, քաղաքացիական հասարակություն»:

CDL-AD(2018)003, Մոլդովայի Հանրապետության Սահմանադրության մեջ (դատական համակարգ) փոփոխություն եւ լրացում կատարելու մասին օրենքի վերաբերյալ եզրակացություն, §56

...

«Ներկայիս միջազգային ստանդարտներով դատական եւ (կամ) դատախազական խորհուրդների կազմի համար միասնական մոդել գոյություն չունի: ...

Այնուամենայնիվ, մի շարք միջազգային փաստաթղթերով նախատեսվում է, որ դատական

խորհուրդ հիմնելիս դրա անդամների զգալի մասը պետք է ընտրվի դատավորների կազմից ...»:

CDL-AD(2014)008, Բոսնիա եւ Հերցեգովինայի Բարձրագույն դատական եւ դատախազական խորհրդի մասին օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացություն, §§27, 28

...

«Այդպիսով, [Բարձրագույն դատական խորհրդի] կազմում 15 անդամներից 11-ը կլինեն դատավորներ: Այս համամասնությունը նույնիսկ չափազանց մեծ է թվում եւ կարող է հանգեցնել անարդյունավետ կարգապահական ընթացակարգերի սահմանման: Թեեւ դատական խորհուրդների կարգապահական որոշումները բողոքարկելու պահանջը պարտադիր է, Վենետիկի հանձնաժողովը պնդում է, որ դատական խորհրդի ոչ դատական բաղադրիչը որոշիչ դեր ունի խորհրդի կարգապահական լիազորությունների արդյունավետ իրականացման համար»:

CDL-AD(2013)034, Ուկրաինայի դատավորների անկախությունն ամրապնդելու նպատակով Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը փոփոխելու մասին առաջարկների վերաբերյալ կարծիք, §41

...

4.2.3 Դատական գործունեություն չիրականացնող անդամները. քաղաքացիական հասարակությունից ներկայացուցիչներ ունենալու կարեւորությունը

«... Պարտադիր չէ, որ դատական իշխանության վարչական կառուցվածքի կառավարումն ամբողջովին գտնվի դատավորների ձեռքերում: Իրականում, որպես ընդհանուր կանոն, Խորհրդի կազմում նախատեսվում է դատական իշխանության մաս չկազմող այն անդամների ներկայությունը, որոնք պետական իշխանության այլ մարմինների կամ հասարակության ակադեմիական կամ մասնագիտական ոլորտների ներկայացուցիչներ են: Այս ներկայությունը հիմնավորված է, քանի որ Խորհրդի նպատակներն առնչվում են ոչ միայն դատական իշխանության անդամների շահերին, այլեւ գլխավորապես ընդհանուր շահերի: Արդարադատության որակի եւ անաչառության նկատմամբ հսկողությունը դուրս է կոնկրետ դատավորի շահերից: Խորհրդի կողմից այս հսկողության իրականացումը կհանգեցնի արդարադատության իրականացման նկատմամբ քաղաքացիների վստահության աճին: Ավելին, ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող համակարգում ողջամիտ է թվում այն, որ Արդարադատության խորհուրդը պետք է հաշվի առնի Պառլամենտի կողմից ներկայացված ժողովրդի կամքը»:

CDL-AD(2014)008, Բոսնիա եւ Հերցեգովինայի Բարձրագույն դատական եւ դատախազական խորհրդի մասին օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացություն, §§32 եւ 35

...

«... Ընդունված գործելակերպ է այն, որ «դատական խորհուրդները նաեւ ներառում են դատական իշխանության ներկայացուցիչ չհանդիսացող եւ իշխանության այլ մարմիններ կամ գիտական կամ մասնագիտական ոլորտը ներկայացնող անդամների», եւ Վենետիկի հանձնաժողովը նույնիսկ առաջարկում է, որ անդամների զգալի մասը լինեն դատավոր

չհանդիսացող անդամներ...»:

CDL-AD(2014)008, Բոսնիա եւ Հերցեգովինայի Բարձրագույն դատական եւ դատախազական խորհրդի մասին օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացություն, §§30, 31

...

«... Դատական խորհուրդներին առաջարկվում է իրենց կազմում ընդգրկել անդամների, որոնք դատական բնագավառի ներկայացուցիչներ չեն: Սակայն նախընտրելի է, որ այս անդամները նշանակվեն օրենսդիր եւ ոչ գործադիր մարմնի կողմից...»:

CDL-AD(2010)042, Թուրքիայի Դատավորների եւ դատախազների բարձրագույն խորհրդի մասին օրենքի նախագծի վերաբերյալ (2010 թվականի սեպտեմբերի 27-ի) միջանկյալ եզրակացություն, §34

«Վենետիկի հանձնաժողովի կարծիքով, դատավոր եւ դատավոր չհանդիսացող անդամների հավասար թվով այս կազմը կապահովի հասարակության ընդգրկվածությունը եւ թույլ կտա խուսափել քաղաքականացումից եւ ինքնակալ (ավտոկրատ) կառավարություն ունենալուց...»:

CDL-AD(2011)010, Չեռնոգորիայի Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաեւ Դատարանների մասին օրենքի, Գլխավոր դատախազության մասին օրենքի եւ Չեռնոգորիայի Դատական խորհրդի մասին օրենքի վերաբերյալ եզրակացություն, §§20-22

«Դատական խորհրդի առաջարկված նոր կազմով նախատեսվում է հավասարություն ապահովել դատավոր եւ դատավոր չհանդիսացող անդամների միջեւ: Վենետիկի հանձնաժողովը ողջունում է այս նոր կազմը, որը թույլ կտա խուսափել թե՛ քաղաքականացման եւ թե՛ դատավորների անսահմանափակ կառավարման ռիսկից...»:

CDL-AD(2012)024, Չեռնոգորիայի դատական իշխանության վերաբերյալ սահմանադրական դրույթների փոփոխությունների նախագծերի երկու փաթեթների մասին եզրակացություն, §§20, 21

...

4.3 Արդարադատության խորհրդի անդամների նշանակման (ընտրության) ընթացակարգային կողմերը

...

«Ինչ վերաբերում է դատական գործունեություն չիրականացնող անդամներին, ապա նրանց նշանակման գործընթացը նույնքան կարեւոր է, որքան նրանց ընտրության մեթոդը: Նրանց քաղաքականապես անկողմնակալ լինելը կարող է ապահովվել թափանցիկ եւ հրապարակային նշանակման գործընթացի միջոցով՝ ինքնավար նշանակող մարմինների (համալսարաններ, հասարակական կազմակերպություններ, փաստաբանների ասոցիացիաներ եւ այլն) նախաձեռնությամբ, որը կատարվում է Դատավորների նշանակման խորհրդի կողմից, որն էլ բաղկացած է դատական իշխանության ներկայացուցիչներից: Առաջադրման նման գործընթացով պետք է ապահովվի, որ խորհրդարանը ընտրի ամենաբարձր որակավորում ունեցող

թեկնածուներից, այլ ոչ քաղաքական թեկնածուներից»:

CDL-AD(2016)009, Ալբանիայի դատական իշխանության վերաբերյալ սահմանադրական փոփոխությունների վերանայված նախագծի մասին վերջնական եզրակացություն (2016 թվականի հունվարի 15), §16

«Ողջունելի է 127-րդ հոդվածի նախագծի այն դրույթը, համաձայն որի՝ դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուները պետք է ընտրվեն թեկնածուների առաջադրման հրապարակային հայտարարության հիման վրա, քանի որ դրանով բարելավվում է ընթացակարգի թափանցիկությունը, ըստ այդմ, նաեւ հանրության վստահությունը Բարձրագույն դատական խորհրդի նկատմամբ»:

CDL-AD(2013)028, Չեռնոգորիայի Սահմանադրական դատարանին, Գերագույն պետական դատախազին եւ Դատական խորհրդին առնչվող երեք սահմանադրական դրույթների փոփոխությունների նախագծի մասին եզրակացություն, §13

...

«... ԲԴԽ դատավոր չհանդիսացող անդամների առաջադրման գործընթացին պետք է պաշտոնապես ներգրավված լինեն փաստաբանների մասնագիտական հանրահայտ աստիճանները, իրավաբանական ուսումնական հաստատությունները եւ այլն...»:

CDL-AD(2017)018, Բուլղարիայի դատական համակարգի վերաբերյալ օրենքի մասին եզրակացություն, §113

...»:

66. Դատական օրենսգրքի նախագծի մասին Վենետիկի հանձնաժողովի եզրակացության համապատասխան մասը, որն ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի 112-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2017 թվականի հոկտեմբերի 6-7, CDL-AD(2017)019) ունի հետեւյալ բովանդակությունը.

« ...

10. Գլուխներ 14 եւ 15 (Բարձրագույն դատական խորհուրդը. կազմը եւ լիազորությունները)

Ա. Կազմը

88. ԲԴԽ-ն կազմված է տասն անդամից (77-րդ հոդված) եւ հավասարապես կազմված է իրենց գործընկերների կողմից ընտրված դատավորներից եւ Ազգային ժողովի կողմից երկրի «հեղինակավոր իրավաբաններից» ընտրված՝ դատավոր չհանդիսացող անդամներից (դատական գործունեություն չիրականացնող անդամներ)՝ ձայների որակյալ մեծամասնությամբ: Այսպիսով, ԲԴԽ-ի կազմը բավականին հավասարակշռված է:

89. 79-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվում է, որ հինգ ոչ դատավոր անդամներն ընտրվում են Ազգային ժողովի կողմից՝ որակյալ մեծամասնությամբ՝ ձայների երեք հինգերորդով. նրանք առաջադրվում են փաստաբանական պալատի, բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ մասնագիտական հասարակական կազմակերպությունների կողմից: Դատավոր չհանդիսացող անդամների ընտրության վերաբերյալ մանրամասն դրույթները սահմանվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով (§8): Բացառված չէ, որ թեկնածուների առաջադրման ընթացակարգը կարող է կարգավորվել Օրենսգրքի նախագծով: Ամեն դեպքում, նշանակման գործընթացը պետք է ապահովի ոչ դատավոր անդամների բազմազան մասնագիտական կատեգորիաների ներկայացվածությունը: «Մասնագիտական հասարակական կազմակերպություններ» հասկացությունը պետք է հստակեցվի. չափազանց նեղ մեկնաբանության դեպքում առաջադրող կազմակերպությունների թիվը եւ չափանիշներին համապատասխանող թեկնածուների ռեզերվը կարող են չափազանց կրճատվել...»:

67. Վենետիկի հանձնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության (ՄԻԳՏ) Մարդու իրավունքների տնօրինության (ՄԻՏ) համատեղ կարծիքը դատական օրենսգրքի եւ որոշ այլ օրենքների վերաբերյալ, որն ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 120-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2019 թվականի հոկտեմբերի 11-12, CDL-AD(2019)2019), ունի հետևյալ բովանդակությունը.

« ...

Դ. Բարձրագույն դատական խորհուրդը

31. Ինչպես նշվել է Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասում, կարգապահական պատասխանատվության ոլորտում ԲԴԽ-ն «հանդես է գալիս որպես դատարան»: ԴՕ-ում այս սահմանադրական դրույթը ենթարկվել է լրամշակման. դրանով ապահովվում է կարգապահական ընթացակարգերի մրցակցային բնույթը, եւ երաշխավորվում են տվյալ դատավորի դատավարական իրավունքները (տե՛ս ԴՕ-ի 19-րդ գլուխը, մասնավորապես՝ 151-րդ հոդվածը): Ավելին, ԲԴԽ-ի անդամներն օգտվում են իրենց անկախության որոշ հիմնական երաշխիքներից (տե՛ս 14-րդ գլխում սահմանված նրանց նշանակման, պաշտոնավարման ժամկետի վերաբերյալ կանոնները եւ այլն): Այսպիսով, ԲԴԽ-ի դերը կարգապահական հարցերում, որպես կանոն, համատեղելի է CM/Rec(2010)12 առաջարկության հետ (էջ 9), որում նշվում է, որ կարգապահական վարույթը «պետք է իրականացվի անկախ մարմնի կամ դատարանի կողմից՝ ապահովելով արդար դատաքննության բոլոր երաշխիքները [...]», եւ ԵԴԽԽ-ի թիվ 21 եզրակացության հետ, որում առաջարկվում է, որ «կարգապահական վարույթը պետք է մշտապես իրականացվի հիմնականում դատական մարմինների կողմից (օրինակ՝ կարգապահական հանձնաժողով կամ դատարան կամ բարձրագույն դատական խորհրդի ճյուղ)»: Մեկ խնդիր, սակայն, դեռեւս մնում է չլուծված՝ կարգապահական հարցերով ԲԴԽ-ի կողմից կայացված

որոշումներն ընդհանուր իրավասության դատարան բողոքարկելու հնարավորության բացակայությունը:

ա. Կարգապահական հարցերով Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկումը

32. Առաջարկվող փոփոխություններում առկա է ԲԴԽ-ի որոշումների «բողոքարկման» վերաբերյալ նոր դրույթ (տե՛ս նոր 156-1 հոդվածը): Այնուամենայնիվ, դժվար է այս մեխանիզմը բնութագրել որպես պատշաճ «բողոքարկում»: Այն ավելի շուտ նման է միեւնույն մարմնի (ԲԴԽ) կողմից նոր երեւան եկած հանգամանքների հիմքով նախկինում լուծված գործի վերաբացման: Ինքնին «բողոքարկում» հասկացությամբ ենթադրվում է որոշման օրինականության եւ հիմնավորվածության նկատմամբ մեկ այլ մարմնի կողմից հսկողություն՝ հիմք ընդունելով միեւնույն (եւ ոչ միայն նոր երեւան եկած) փաստերը եւ ապացույցները: Չետեւաբար առաջարկվող մեխանիզմը չի կարող փոխարինել բողոքարկմանը՝ այդ բառի բուն իմաստով:

33. Ինդիրն արդեն իսկ դիտարկվել է 2017 թվականի հոկտեմբերին ներկայացված եզրակացության մեջ: [Իշխանությունները պնդում են, որ Սահմանադրությամբ արգելվում է նման բողոքարկումը, եւ այն անտեղի է ցանկացած դեպքում, թե՛ դատավարական եւ թե՛ ինստիտուցիոնալ տեսանկյունից, քանի որ կարգապահական հարցերով ԲԴԽ-ն գործում է որպես դատարան, եւ տվյալ դատավորը կարող է ԲԴԽ-ում օգտվել «արդար դատաքննության» բոլոր երաշխիքներից:

34. Վենետիկի հանձնաժողովի կարծիքով, գոյություն ունեն ԲԴԽ-ի որոշումների դեմ բողոք ներկայացնելու հարցը լրջորեն քննարկելու մի քանի պատճառներ: Առաջին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածով անուղղակիորեն երաշխավորվում է դատարանի մատչելիության իրավունքը: Եթե ենթադրենք, որ դատավորի նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցն ազդում է նրա քաղաքացիական իրավունքների եւ պարտավորությունների վրա, ապա այդ դատավորի համար պետք է ապահովվի այդ մատչելիությունը: Չարց այն է՝ արդյո՞ք Չայաստանի ԲԴԽ-ն կարող է հանդես գալ որպես «դատարան»: *Ռամոս Նունես դե Կարվալյու Է Սան ընդդեմ Պորտուգալիայի [Ramos Nunes de Carvalho e Sa v. Portugal]* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) Մեծ պալատը հանգել է այն եզրակացության, որ քանի որ Պորտուգալիայի դատական իշխանության բարձրագույն պալատը վարչական մարմին է, 6-րդ հոդվածով կպահանջվի «բացարձակ իրավագրություն ունեցող դատական մարմնի կողմից հետագա հսկողություն» (§132), այսինքն՝ բողոքարկման ամբողջական գործընթաց: Այլ կերպ ասած, *եթե* ՄԻԵԴ-ը գտնում է, որ ԲԴԽ-ն չի բավարարում դատական մարմնին ներկայացվող պահանջները (ի տարբերություն Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասում նշվածի), ապա ընդհանուր իրավասության դատարան բողոքարկելու անհրաժեշտությունը կբխի Եվրոպական կոնվենցիայի պահանջներից:

35. Երկրորդ, նույնիսկ եթե 6-րդ հոդվածով որեւէ հարց չի առաջանում, ընդհանուր իրավասության դատարան կարգապահական հարցերով բողոք ներկայացնելու անհրաժեշտությունը բխում է մի շարք եվրոպական փաստաթղթերից, օրինակ՝ ԵԴԽԽ-ի թիվ 10

եզրակացությունը: Թիվ 10 եզրակացության 39-րդ էջում նշվում է, որ «ԴԻՄ-ի որոշ որոշումների», օրինակ՝ «[...] դատավորների կարգապահության եւ ազատման հետ կապված որոշումների դեպքում» պետք է «նախատեսվի դատական վերանայման հնարավորություն»: Նախարարների կոմիտեի չափանիշներն ավելի ճկուն են. ՇՄ(2010)12 առաջարկության 69-րդ էջում նշվում է, որ կարգապահական վարույթը «պետք է իրականացվի անկախ մարմնի կամ դատարանի կողմից՝ ապահովելով արդար դատաքննության բոլոր երաշխիքները եւ դատավորին տալով որոշումը եւ պատիժը բողոքարկելու իրավունք»: Այսպիսով, ՇՄ առաջարկությունը կկատարվի այն դեպքում, երբ առկա կլինի պատիժը բողոքարկելու հնարավորություն, սակայն նշված չէ՝ արդյոք բողոքը քննող մարմինը պետք է լինի ընդհանուր իրավասության դատարանը, թե՛ ոչ: Ամեն դեպքում, ՇՄ-ով պահանջվում է այդ հարցերով դատական երկրորդ աստիճանի անկայություն, որը Հայաստանի համակարգում բացակայում է:

36. Ի վերջո, հենց Վենետիկի հանձնաժողովն է տարբեր առիթներով առաջարկել ունենալ կարգապահական հարցերով դատական խորհուրդների կայացրած որոշումների բողոքարկման ընթացակարգ՝ միաժամանակ ընդունելով, որ այս բողոքարկման ընթացակարգը կարող է ունենալ սահմանափակ շրջանակ: Այսպիսով, Հյուսիսային Մակեդոնիայի վերաբերյալ եզրակացության մեջ Վենետիկի հանձնաժողովն առաջարկել է, որ «Բողոքարկման խորհուրդը պետք է չեղարկի ԴԻՄ-ի որոշումները միայն այն դեպքերում, երբ դատավարական եւ կյանական իրավունքի կիրառման գործընթացում առկա են կոպիտ սխալներ», եւ Բոսնիա եւ Հերցեգովինայի վերաբերյալ եզրակացության մեջ այն նշել է, որ ընդհանուր իրավասության դատարան ԲԴԻՄ-ի որոշումների բողոքարկումն անհրաժեշտ է «առնվազն այն դեպքերում, երբ սահմանվում է խիստ պատիժ»: 2017 թվականի հոկտեմբերին ներկայացված եզրակացության մեջ Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է, որ «վերաքննիչ կարգով իր վերանայումն իրականացնելիս բողոքարկման մարմինը պետք է գործի [Դատական խորհրդի] նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելով, երբ հարցը վերաբերում է փաստական հանգամանքները պարզելուն եւ համապատասխան վարքագծի կանոնները մեկնաբանելուն»:

37. Սահմանադրությունից հանվել է ԲԴԻՄ-ի որոշումների դեմ բողոքներ ներկայացնելու հնարավորությունը, իսկ ՀՀ իշխանությունները գերծ են մնացել այն օրենսդրական մակարդակում ներմուծելուց: Վենետիկի հանձնաժողովը շատ լուրջ է ընդունում ՀՀ իշխանությունների՝ Սահմանադրության տեքստի նշանակության վերաբերյալ փաստարկները, թեեւ, իր կարծիքով, Սահմանադրությունը կարող է մեկնաբանվել տարբեր կերպ: Այնուամենայնիվ, սահմանադրական բարեփոխում նախատեսելու դեպքում իշխանություններին առաջարկվում է դիտարկել կարգապահական հարցերի առնչությամբ որոշումների դեմ ԲԴԻՄ բողոքներ ներկայացնելու հնարավորության ներմուծումը, նույնիսկ եթե այն սահմանափակ շրջանակ ունի ...»:

68. Վենետիկի հանձնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության (ՄԻԳՏ) Մարդու իրավունքների տնօրինության (ՄԻՏ) համատեղ կարծիքը դատական օրենսգրքի եւ որոշ այլ օրենքների վերաբերյալ, որն ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 133-րդ լիազումար նիստում (Վենետիկ,

2022 թվականի դեկտեմբերի 16-17, CDL-AD(2022)044), ունի հետևյալ բովանդակությունը.

« ...

19. Սահմանադրության եւ օրենքի շրջանակներում ԲԴԽ-ն կարգապահական հարցերում գործում է որպես դատարան: Ի վերջո, ՄԻԵԴ-ին է վերապահված [ըստ բնօրինակի] որոշելը, թե արդյոք Հայաստանի ԲԴԽ-ն 6-րդ հոդվածի իմաստով համարվում է «դատարան» (տե՛ս 2019 թվականի եզրակացության 34-րդ պարբերությունը), սակայն Վենետիկի հանձնաժողովի համար այս հարցին կարելի է դրական պատասխան տալ, քանի որ ԲԴԽ-ն ունի դատական մարմնի բոլոր հիմնական բնութագրերը՝ թե՛ ինստիտուցիոնալ եւ թե՛ դատավարական:

20. Ամփոփելով նշենք, որ Վենետիկի հանձնաժողովի կարծիքով, կարգապահական հարցերով ԲԴԽ-ի կողմից կայացված որոշումների դեմ դատարան բողոքարկելու իրավասության բացակայությունը խնդիր չի առաջացնում ՄԻԵԿ-ի տեսանկյունից: Այնուամենայնիվ, անգամ եթե ներկայիս համակարգը չի հակասում ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածին, այն կարող է չհամապատասխանել Եվրոպայի խորհրդի այլ չափորոշիչներին... »:

4. Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ

69. Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ)՝ թիվ 10(2007) Եվրոպայի խորհրդի հասարակությանը ծառայելու գործում Դատական խորհրդի դերի մասին կարծիքը, որն ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 23-ին, վերաբերելի մասով ունի հետևյալ բովանդակությունը.

« ...

III. Ա. Դատավորների մեծամասնությունից կազմված դատական խորհուրդ

...

17. Զանի որ Դատավորների խորհուրդը կազմված է միայն դատավորներից, ԵԴԽԽ-ն այն կարծիքին է, որ նրանք պետք է լինեն իրենց գործընկերների կողմից ընտրված դատավորներ:

18. Եթե խորհրդի կազմը միատարր չէ (դատավորներ եւ ոչ դատավորներ), ԵԴԽԽ-ն համարում է, որ ցանկացած մանիպուլյացիա կամ անտեղի ճնշում կանխելու նպատակով անդամների զգալի մեծամասնությունը պետք է լինեն իրենց գործընկերների կողմից ընտրված դատավորներ:

19. ԵԴԽԽ-ի կարծիքով, կազմի միատարր չլինելը տալիս է ինքնապաշտպանության, սեփական շահերի եւ նեպոտիզմի գաղափարի առաջացումը կանխելու եւ հասարակության տարբեր տեսակետներ արտացոլելու առավելություններ՝ այդպիսով դատավորների համար ապահովելով օրինականության լրացուցիչ աղբյուր: Այնուամենայնիվ, նույնիսկ եթե անդամների

կազմը միատարր չէ, Դատական խորհրդի գործունեությունը չի թույլատրի որեւէ զիջում խորհրդարանական մեծամասնությունների փոխգործակցության կամ գործադիր իշխանության կողմից ճշման նկատմամբ, եւ այն զերծ կմնա քաղաքական կուսակցությունների կարծիքներին ենթարկվելուց, որպեսզի կարողանա պահպանել արդարադատության արժեքներն ու հիմնարար սկզբունքները:

...

IV. Բ. Դատական խորհրդի որոշումները

39. Արդարադատության համակարգի կառավարման եւ համակարգման վերաբերյալ Դատական խորհրդի որոշ որոշումներ, ինչպես նաեւ դատավորների պաշտոնի նշանակման, տեղաշարժի, առաջխաղացման, կարգապահական միջոցների եւ պաշտոնից ազատելու (եթե խորհուրդը ունի նման լիազորություններ) վերաբերյալ կայացված որոշումները պետք է պարունակեն պարզաբանում՝ դրանց հիմքերի, պարտադիր ուժի եւ դատական վերանայման հնարավորության մասին: Իսկապես, Դատական խորհրդի անկախությունը չի նշանակում, որ վերջինս օրենքի կարգավորման շրջանակից դուրս է եւ ազատված է դատական վերահսկողությունից»:

70. ԵԴԽԽ-ի կողմից 2010 թվականի նոյեմբերին ընդունվել է Դատավորների Մագնա Կարտան (հիմնարար սկզբունքները): Համապատասխան բաժինն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Անկախությունը երաշխավորելու համար պատասխանատու մարմինը

13. Դատավորների անկախությունն ապահովելու համար յուրաքանչյուր պետություն ստեղծում է Դատավորների խորհուրդ կամ այլ հատուկ մարմին, որն ինքնին անկախ է օրենսդիր եւ գործադիր իշխանություններից, ունի իր կարգավիճակի, ինչպես նաեւ դատական հաստատությունների կազմակերպման, գործունեության եւ հեղինակության վերաբերյալ բոլոր հարցերով լայն իրավասություններ: Խորհուրդը կազմված է կամ բացառապես դատավորներից, կամ դրա զգալի մեծամասնությունը կազմում են իրենց գործընկերների կողմից ընտրված դատավորները: Դատական խորհուրդը հաշվետու է իր գործունեության եւ որոշումների համար»:

5. Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբ

71. Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (ԳՐԵԿՈ) զեկույցը՝ Պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելումը (Գնահատման զեկույց. Հայաստանի Հանրապետություն, 78-րդ լիազումար նիստ, 2017 թվականի դեկտեմբերի 4-8), նույնպես կարելու է:

«Դատավորների շրջանում կոռուպցիայի կանխարգելում» վերնագրով գլխում նշվել է հետեւյալը.

«Առաջարկություն v.

30. ԳՐԵԿՈՆ-ն առաջարկել է, որ շարունակվեն դատական իշխանության ինքնակառավարման բարեփոխումները՝ նպատակ ունենալով ամրապնդելու դատական իշխանության անկախությունը, ապահովելու ինքնակառավարման մարմինների բոլոր մակարդակներում դատավորների բավարար չափով ներկայացվածությունը եւ նվազեցնելու դատարանների նախագահների, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի նախագահի դերը:

31. Իշխանությունները զեկուցում են, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները հանգեցրել են արդարադատության համակարգում մի շարք փոփոխությունների: Սահմանադրությամբ (հոդված 173) այժմ նախատեսվում է, որ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների եւ այդ դատարանների դատավորների անկախությունը: Այն կազմված է 10 անդամից, այդ թվում՝ հինգ դատավորից բոլոր մակարդակներում, որոնք ունեն առնվազն 10 տարվա փորձ, ընտրվել են Դատավորների ընդհանուր ժողովի կողմից, ինչպես նաեւ հինգ իրավաբան-գիտնականներից եւ այլ հեղինակավոր իրավաբաններից, որոնք ընտրվել են Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդի կողմից: Բարձրագույն դատական խորհրդի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի: Դատական խորհուրդը իր անդամներից ընտրում է նախագահ:

32. Բարձրագույն դատական խորհրդի ամբել դրված են հետեւյալ խնդիրները. նշանակման եւ առաջխաղացման համար դատավորների թեկնածուներ ընտրելը եւ առաջարկելը, այլ դատարան դատավորներին գործուղելու հարցը որոշելը, դատավորի նկատմամբ քրեական վարույթ հարուցելուն համաձայնություն տալը, կարգապահական տույժերի հարցը որոշելը եւ դատավորի լիազորությունները դադարեցնելը, բյուջեի վերաբերյալ առաջարկություններ պատրաստելը եւ կառավարություն ներկայացնելը եւ այլն: Բացի այդ, իշխանությունները նշում են, որ Նոր Դատական օրենսգիրք է մշակվում՝ աշխատանքային խմբի կողմից Նոր սահմանադրական պահանջները իրականացնելու համար: Օրենսգրքի նախագծում նշվում է, որ ինքնակառավարման մարմինները ներառում են Բարձրագույն դատական խորհուրդը եւ Դատավորների ընդհանուր ժողովը:

33. ԳՐԵԿՈՆ-ն ողջունում է սահմանադրական փոփոխությունները, որոնցով բարեփոխվել է Հայաստանի դատական ինքնակառավարման համակարգը՝ Բարձրագույն դատական խորհուրդն ստեղծելու միջոցով: ԳՐԵԿՈՆ-ն նշում է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամների կեսը կազմում են բոլոր մակարդակների դատավորներ, որոնք ընտրվել են Դատավորների ընդհանուր ժողովի՝ իրենց գործընկերների կողմից: Ավելին, նվազեցվել է դատարանի նախագահների դերը, ինչպես պահանջվել էր Առաջարկությունում: Եզրափակելով՝ նշենք, որ Բարձրագույն դատական խորհրդի հիմնումը կարելու է ճիշտ ուղղությամբ ընթացող բարեփոխում է թվում:

34. ԳՐԵԿՈՆ-ն եզրակացնում է, որ v առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

...

46. Ինչ վերաբերում է Առաջարկության ii մասին, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ վերանայված Սահմանադրությամբ սահմանվել է, որ Բարձրագույն դատական խորհուրդը ներկայումս իրավասու է դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշումներ կայացնել (175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ): Սա ողջունելի է որպես ընթացակարգային երաշխիքի ձեւ՝ հաշվի առնելով սույն մարմնի կազմը (տե՛ս Առաջարկություն v): Ավելին, այն սկզբունքը, որ դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքների կամ կայացրած դատական ակտերի համար (Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մաս), մեկ այլ երաշխիք է: ԳՐԵԿՈ-ն նաեւ գնահատում է այն, որ նոր Սահմանադրությամբ նշվել է, որ դատավորի լիազորությունների դադարեցումը տույժ է առաջացնում միայն կոպիտ կարգապահական խախտումների համար (164-րդ հոդվածի 9-րդ մաս): Այնուամենայնիվ, ԳՐԵԿՈ-ն մտահոգված է, որ կարծես թե հնարավոր չէ կարգապահական բնույթի որոշումը բողոքարկել դատարան, իսկ Սահմանադրական դատարանում այն կարելի է բողոքարկել միայն դրա սահմանադրականության մասով: Կարելի է եզրակացնել, որ առաջարկության այս մասը մասամբ է իրականացվել»:

72. Պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին ԳՐԵԿՈ-ի զեկույցի համապատասխան մասը (Գնահատման զեկույց. Հայաստանի Հանրապետություն, 84-րդ լիազումար նիստ, 2019 թվականի դեկտեմբերի 2-6) ունի հետեւյալ բովանդակությունը.

« ...

41. Ինչ վերաբերում է Առաջարկության դեռ չավարտված երկրորդ մասին, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ նոր Դատական օրենսգրքի ընդունմամբ Բարձրագույն դատական խորհրդի՝ որակավորման քննություն անցկացնելու կամ առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ դիմումները մերժելու մասին որոշումները կարող են բողոքարկվել Վարչական դատարանում: Այնուամենայնիվ, ներկայումս, թվում է, թե հնարավոր չէ բողոքարկել դատավորներին պաշտոնից ազատելու մասին որոշումները: ԳՐԵԿՈ-ն նշում է, որ Դատական օրենսգրքի հետագա փոփոխությունները կանխատեսելի են, որը, *inter alia* (ի թիվս այլնի), նախատեսում է գրավոր որակավորման քննությունները վիճարկելու հնարավորություն, նախ՝ բողոքարկման հանձնաժողովում (որպես ֆիլտր), այնուհետեւ՝ դատարանում: Այդ գործընթացը ընթանում է ճիշտ ուղղությամբ: Նաեւ կարելի է ասել, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական հարցերի վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել, սակայն դժվար է այս մեխանիզմը բողոքարկման պատշաճ մեխանիզմ համարել, ավելի շուտ դա ԲԴԽ-ի կողմից գործը վերաբացելու հնարավորություն է: Այս համակարգը դեռեւս անկատար է: ԳՐԵԿՈ-ն ընդգծում է, որ բողոքարկման մեխանիզմներ պետք է նախատեսել աշխատանքի ընդունելու, առաջխաղացման եւ աշխատանքից ազատելու մասին որոշումների համար, ինչպես պահանջվում է Առաջարկությամբ:

42. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ vii առաջարկությունը մնում է մասամբ կատարված:

...»

73. Պատգամավորների, դատավորների եւ դատախազների շրջանում

կոռուպցիայի կանխարգելման մասին ԳՐԵԿՈ-ի զեկույցի համապատասխան մասը (Գնահատման զեկույց, Հայաստանի Հանրապետություն, 93-րդ լիազումար նիստ, 2023 թվականի մարտի 20-24) ունի հետևյալ բովանդակությունը.

«Առաջարկություն vii

33. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է բարեփոխել դատավորների պաշտոնների համալրման, առաջխաղացման եւ պաշտոնից ազատման ընթացակարգերը, այդ թվում՝ i) ամրապնդելով այդ ընթացակարգերում դատական իշխանության դերը եւ նվազեցնելով հանրապետության նախագահի դերը եւ պահանջելով նրանից տալ իր որոշումների գրավոր հիմնավորումները, եւ ii) ապահովելով այդ ընթացակարգերի ժամանակ ընդունված ցանկացած որոշման՝ դատական կարգով բողոքարկման հնարավորությունը:

...

36. Ինչ վերաբերում է մնացած ii մասին, ապա ԳՐԵԿՈ-ն նշում է, որ «Դատական օրենսգրքի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին նոր նախագծով ներդրվելու է Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորների հետ կապված կարգապահական հարցերով որոշումների բողոքարկման մեխանիզմ: ԳՐԵԿՈ-ն նշում է, որ ԲԴԽ-ի՝ կարգապահական հարցերով որոշումների բողոքարկման նոր համակարգը կազմված է երկրորդ ատյանի դատարանից, որը պետք է ստեղծվի հենց ԲԴԽ-ի կազմում: Թեեւ դատարանում բողոքարկելն ավելի լավ տարբերակ կլիներ, ինչպես որ նշված է Առաջարկության մեջ, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ դրա համար անհրաժեշտ կլիներ փոփոխություն կատարել Սահմանադրության մեջ, եւ որ բողոքարկման ատյանի ստեղծումը ԲԴԽ-ի կազմում ընդունելի փոխզիջում է Վենետիկի հանձնաժողովի կողմից: Սակայն այս փոփոխությունները դեռ պետք է վերջնական տեսքի բերվեն եւ ընդունվեն: Հետեւաբար Առաջարկության այս մասը դեռեւս չի կարող համարվել կատարված»:

Գ. Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ)

74. 2018 թվականին ՏՀԶԿ-ն Հայաստանի իշխանություններին հանձնարարել է «ստեղծել ԲԴԽ ոչ դատավոր անդամների ընտրության բաց, թափանցիկ եւ մրցակցային ընթացակարգ եւ սահմանել Ազգային ժողովի կողմից դրա անդամների ընտրության չափանիշները»⁴:

⁴Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում, ՏՀԶԿ, էջ 79:

Դ. Դատական խորհուրդների եվրոպական ցանց

75. Դատական խորհուրդների եվրոպական ցանցը (ԴԽԵՑ) 2021 թվականին Վիլնյուսում կայացած արտահերթ ընդհանուր ժողովում ընդունել է Դատական խորհուրդների վերաբերյալ ամփոփագիրը, որի համապատասխան մասերն ունեն հետեւյալ բովանդակությունը.

« ...

Գ. Կազմը եւ կառուցվածքը

Խորհուրդը կարող է կազմված լինել բացառապես դատական իշխանության ներկայացուցիչներից եւ դատական իշխանության ներկայացուցիչ չհանդիսացող անդամներից: Ամենահաջողված մոդելները, որոնց կազմում համատեղ ներկայացված են իրենց գործընկերների կողմից ընտրված դատավորներ եւ իրավական, գիտական կամ քաղաքացիական հասարակության շրջանակներից ընտրված (նշանակված) անդամներ, որոնք օժտված են դատական անկախությունը եւ հաշվետվողականությունը խթանելու համար բավարար, լայն լիազորություններով: Սա դիտվում է որպես դատական իշխանության իրական անկախության խթանման եւ երաշխավորման ամենաճիշտ ուղին՝ Խորհրդին քաղաքական միջամտությունից ազատելու միջոցով, եւ ծառայում է դրա ինքնավարությունն ամրապնդելուն:

Բացի այդ, դատավոր չհանդիսացող անդամների մասնակցությունը ամրապնդում է խորհուրդների հաշվետվողականությունն ու հրապարակայնությունը քաղաքացիական հասարակության համար:

Եթե կազմը միատարր չէ, Խորհուրդը պետք է մեծամասամբ, բայց ոչ պակաս, քան 50%-ը, կազմված լինի դատավոր անդամներից:

Ամեն դեպքում (անկախ նրանից՝ այդ կազմը միատարր է, թե՛ ոչ), Խորհրդի անդամները (անկախ նրանից, թե ինչպես են նրանք նշանակվել) պետք է գործեն որպես ամբողջ դատական իշխանության ներկայացուցիչներ:

Խորհրդի բոլոր աշխատանքային խմբերի կազմում պետք է երաշխավորվի մեծամասամբ դատական իշխանության ներկայացուցիչների ներկայացվածությունը:

...

Դատավոր չհանդիսացող անդամները

Դատական խորհուրդների եւ համարժեք մարմինների կազմը պետք է ներառի դատավոր չհանդիսացող անդամներ՝ արտացոլելով հասարակության բազմազանությունը:

Դատավոր չհանդիսացող անդամների առաջադրման, ընտրման կամ նշանակման գործընթացը պետք է լինի թափանցիկ եւ արժանիքահեն: Եթե դատավոր չհանդիսացող

անդամները նշանակվում են խորհրդարանական մարմինների կողմից, ցանկալի է, որ նրանց ընտրությունն իրականացվի ձայների որակյալ մեծամասնությամբ՝ քաղաքական ազդեցությունից խուսափելու համար:

Դատավոր չհանդիսացող անդամները պետք է համապատասխանեն դատավորների բարեվարքության, անկախության եւ անաչառության նույն չափորոշիչներին, սակայն դատավոր չհանդիսացող անդամները չպետք է լինեն քաղաքական գործիչներ, կամ այդ կազմում չպետք է ներառված լինի Արդարադատության նախարարը: Դատական խորհուրդների դատավոր չհանդիսացող անդամները եւ համապատասխան այլ մարմիններ՝ որպես Դատական խորհրդի անդամ կամ այլ համապատասխան մարմին, իրենց մանդատն ստանալուց առաջ կամ հետո ողջամիտ ժամկետում չպետք է ներգրավված լինեն քաղաքականության մեջ»:

Ե. Այլ միջազգային նյութեր

76. Արեւելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիեւի հանձնարարականների համապատասխան մասերը՝ Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի՝ 2010 թվականի դատական վարչարարությունը, ընտրությունը եւ հաշվետվողականությունը, սահմանում են հետեւյալը.

«Դատական խորհուրդների կազմը

7. ... Բացի դատավորների կողմից ընտրված դատական անդամների զգալի թվից՝ Դատական խորհուրդը պետք է բաղկացած լինի իրավագիտության դասախոսներից եւ գերադասելի է, փաստաբանների կոլեգիայի անդամներից՝ ներառականությունը եւ թափանցիկությունն առավել խրախուսելու նպատակով:

...

Կարգապահության վերաբերյալ որոշում կայացնող մարմինների անդամակցությունը

9. Կարգապահական գործը քննելու եւ կարգապահական միջոցների վերաբերյալ որոշում կայացնելու համար իրավասու մարմինները (տե՛ս 5-րդ պարբերության «բ» կետը) չպետք է կազմված լինեն բացառապես դատավորներից, այլ պահանջեն ներկայացուցչություն՝ բացի դատական բնույթի մասնագիտություն ունեցող անդամներից՝ ներառելով նաեւ այլ մասնագիտություն ունեցող անդամների:

...

Կարգապահության վերաբերյալ որոշում կայացնող անկախ մարմինը

26. Պետք է լինի հատուկ անկախ մարմին (դատարան, հանձնաժողով կամ խորհուրդ), որը քննում է դատավորների կարգապահության առնչվող գործերը (տե՛ս 9-րդ պարբերությունը)»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 6-ՐԴ ՅՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

77. Դիմումատուն բողոքել է, որ ԲԴԽ-ն չի բավարարել «անկախ եւ անաչառ տրիբունալի» պահանջները, քանի որ նրա ոչ դատական անդամներն առաջադրվել եւ ընտրվել են ոչ արժանիքների վրա հիմնված, ոչ էլ թափանցիկ եւ ենթադրաբար քաղաքականացված ընթացակարգով: Յաշվի առնելով ԲԴԽ-ի կողմից նրա պաշտոնանկությունը բողոքարկելու անհնարիանությունը՝ դատարան դիմելու նրա իրավունքը խախտվել է: Ի վերջո, նա բողոքել է, որ ԲԴԽ-ի նախագահը՝ Կ.Ա.-ն, անաչառ չի եղել, քանի որ նա սերտ կապեր ուներ Արդարադատության նախարար Գ.Ս.-ի հետ, որը դիմումատուի դեմ կարգապահական վարույթ էր հարուցել: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ տրիբունալի կողմից դատաքննության իրավունք»:

Ա. Ընդունելիությունը

1. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառումը

ա) Կողմերի փաստարկները

78. Կառավարությունն ընդունել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է իր քաղաքացիաիրավական հայեցակետով: Մասնավորապես նրանք պնդում էին, որ ըստ Հայաստանի օրենսդրության՝ դիմումատուն իրավունք ուներ որպես դատավոր աշխատել մինչև 65 տարեկանում կենսաթոշակի անցնելը՝ առանց հաշվի առնելու Սահմանադրության եւ Դատական օրենսգրքի համապատասխան դրույթներով նախատեսված բացառությունները (Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ եւ 9-րդ մասերը՝ մեջբերված վերոնշյալ 20-րդ կետում, ինչպես նաեւ վերոնշյալ 51-րդ կետում): Այսպիսով, սույն գործում տեղի է ունեցել իրական եւ լուրջ վեճ այնպիսի «իրավունքի» շուրջ, որը դիմումատուն կարող էր պահանջել վիճելի հիմքերով՝ ներպետական օրենսդրության համաձայն: Վկայակոչելով Դատարանի կողմից *Վիլհո Էսկելինենը եւ այլք ընդդեմ Ֆինլանդիայի* ([ՄԴ] [*Vilho Eskelinen and Others v. Finland*] [GC] թիվ 63235/00, §62, ՄԻԵԴ 2007-II «Էսկելինենի գործով թեստ») գործի հիման վրա սահմանված սկզբունքները, նրանք վիճարկում էին, որ ներպետական իրավունքն ակնհայտորեն չէր բացառում տվյալ պաշտոնի կամ անձնակազմի կատեգորիայի համար մուտքը դատարան: Մասնավորապես, թեեւ ԲԴԽ-ն սովորական դատական համակարգի մաս չէր կազմում, եւ նրա որոշումները սովորական դատարաններում չէին բողոքարկվում, ի տարբերություն նախկինում գոյություն ունեցող Արդարադատության խորհրդի (*տե՛ս Մնացականյանն ընդդեմ Հայաստանի* [*Mnatsakanyan v. Armenia*], թիվ 2463/12, §§ 51-54, 2022 թվականի դեկտեմբերի 6)՝ այն դատավորներին առնչվող կարգապահական հարցերում ուներ բացառիկ իրավասություն եւ որպես այդպիսին, այդ վարույթների ընթացքում հանդես էր գալիս «դատարանի» կարգավիճակով, ինչպես նշել է նաեւ Վենետիկի հանձնաժողովը (վերոնշյալ 68-րդ պարբերությունում մեջբերված համապատասխան եզրակացության 19-րդ կետը):

79. Դիմումատուն պնդել է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի է իր քաղաքացիական հայեցակետով: Այնուամենայնիվ, նա վիճարկում էր, որ ԲԴԽ-ն չի բավարարել տվյալ հոդվածով սահմանված «անկախ եւ անաչառ տրիբունալի» պահանջները: Այսպիսով, նա պնդում էր, որ իրեն զրկել են դատարան մուտք

գործելու իրավունքից, մինչդեռ պատասխանող Կառավարությունը չի ներկայացրել որեւէ փաստարկ՝ ցույց տալու համար, որ նման բացառումը հիմնավորված է որեւէ օբյեկտիվ հիմքով, ինչպես պահանջվում է Եսկեյինների գործով թեստի երկրորդ պայմանով:

բ) Դատարանի գնահատականը

80. Դատարանն ի սկզբանե նշել է, որ կողմերից որեւէ մեկը չի պնդել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի էր իր քրեական հայեցակետով: Իր մասով Դատարանը նաեւ գտնում է, որ սույն գործի հանգամանքները թույլ չեն տալիս, որ նրանք այլ եզրահանգման գան (որպես համեմատություն՝ *Կատանյան ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* [*Catană v. the Republic of Moldova*] թիվ 43237/13, § 41, 2023 թվականի փետրվարի 21, *Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի* [ՄՊ] [*Denisov v. Ukraine*] թիվ 76639/11, § 43, 2018 թվականի սեպտեմբերի 25 եւ *Ռամոս Նունես դե Կարվալյու Է Սան ընդդեմ Պորտուգալիայի* [ՄՊ] [*Ramos Nunes de Carvalho e Sa v. Portugal*] թիվ 55391/13 եւ թվով 2 այլ գործեր, §§ 122-27, 2018 թվականի նոյեմբերի 6): Իսկապես, որեւէ հիմք չկա ենթադրելու, որ սովորաբար որպես «Էնգելի չափանիշներ» հայտնի չափանիշները (տե՛ս Էնգելը եւ այլք ընդդեմ Նիդեռլանդների [*Engel and Others v. the Netherlands*], 1976 թվականի հունիսի 8, § 82, շարք «Ա», թիվ 22) բավարարվել են այնպես, որպեսզի հնարավոր լինի եզրակացնել, որ դիմումատուի դեմ ներկայացված կարգապահական վարույթը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով վերաբերում էր քրեական մեղադրանքը սահմանելուն:

81. Կողմերը չեն վիճարկել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությունն իր քաղաքացիական հայեցակետով: Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետն իր քաղաքացիաիրավական հայեցակետով տարածվում է միայն «քաղաքացիական իրավունքների» շուրջ ծագած «վեճերի» (ֆրանսերեն տեքստում՝ «վիճարկում» [contestations]) նկատմամբ, որոնք, կարելի է ասել, թեկուզ վիճելի հիմքերով, պետք է ճանաչվեն ներպետական օրենսդրությամբ՝ անկախ դրա՝ Կոնվենցիայով պաշտպանված լինելու հանգամանքից: Վեճը պետք է լինի իրական եւ լուրջ. այն կարող է վերաբերել ոչ միայն իրավունքի փաստացի առկայությանը, այլեւ դրա շրջանակին եւ իրացման եղանակին: Վարույթի արդյունքը պետք է ուղղակիորեն

որոշիչ լինի տվյալ իրավունքի հարցում, զուտ աննշան կապը կամ հեռակա հետեւանքները բավարար չեն 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման համար (տե՛ս *Միկալլեֆն ընդդեմ Մալթայի [ՄԴ] [Micallef v. Malta] [GC]*, թիվ 17056/06, § 74, ՄԻԵԴ 2009, եւ *Գյուլումյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի [Gyulumyan and Others v. Armenia] (դեկ., թիվ 25240/20, § 64, 2023 թվականի նոյեմբերի 21)*):

82. Դատարանը նշում է, որ դիմումատուն, որը տվյալ պահին մոտավորապես 54 տարեկան էր, Հայաստանի օրենսդրությամբ, այդ թվում՝ Սահմանադրությամբ իրավունք ուներ որպես դատավոր պաշտոնավարելու մինչեւ 65 տարեկանը (տե՛ս վերոնշյալ 20-րդ կետում մեջբերված 166-րդ հոդվածի 8-րդ կետը, տե՛ս նաեւ վերոնշյալ 22-րդ կետը): Ավելին, նրա լիազորությունները կարող են դադարել կամ վաղաժամկետ դադարեցվել միայն Սահմանադրությամբ եւ Դատական օրենսգրքով սահմանված բացառիկ հանգամանքներում (տե՛ս վերոնշյալ 20-րդ կետում մեջբերված Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ եւ 9-րդ մասերը, տե՛ս նաեւ վերոնշյալ 51-րդ պարբերությունը): Հետեւաբար Դատարանը գտնում է, որ, ինչպես պնդում է Կառավարությունը, սույն գործում առկա է իրական եւ լուրջ վեճ «իրավունքի» վերաբերյալ, որը դիմումատուն կարող էր պահանջել ներպետական օրենսդրության համաձայն վիճելի հիմքերով (որպես համեմատություն՝ Մնացականյանի [*Mnatsakanyan*] գործը, վերելում հիշատակված, § 48 եւ այնտեղ հիշատակված հղումները): Մնում է պարզել, թե արդյոք տվյալ իրավունքն ուներ քաղաքացիական բնույթ:

83. Այդ կապակցությամբ Դատարանը վերահաստատում է այն սկզբունքները, որոնք հաստատվել են Մեծ պալատի կողմից վերոհիշյալ Վիլհո Էսկելինեն [*Vilho Eskelinen*] գործով, ինչպես ամփոփված է Գրգեդան ընդդեմ Լեհաստանի [ՄԴ] [*Grzęda v. Poland*], թիվ 43572/18 գործով, §§ 257-64, 2022 թվականի մարտի 15), ըստ որի՝ պետական պաշտոնյաների եւ պետության միջեւ աշխատանքային վեճերը կարող են դուրս լինել 6-րդ հոդվածի քաղաքացիական հայեցակետից՝ պայմանով, որ իրագործվեն միասնական պայմանները: Առաջին հերթին պետությունն իր ազգային օրենսդրության մեջ պետք է հստակորեն բացառի տվյալ պաշտոնի կամ անձնակազմի կատեգորիայի մուտքը դատարաններ: Երկրորդ՝ բացառումը պետք է հիմնավորված լինի օբյեկտիվ հիմքերով՝ ելնելով պետության շահերից (սույն տեղում, § 261): Առկա է 6-րդ հոդվածի կիրառման կանխավարկածը: Այդ սկզբունքները կիրառվել են քաղաքացիական ծառայողների մասնակցությամբ վեճերի, ինչպես նաեւ

դատավորների հետ կապված վեճերի, այդ թվում՝ դատական պաշտոնից ազատման հետ կապված վարույթների նկատմամբ (նույն տեղում, § 263 եւ դրանում նշված լիազորությունները):

84. Դատարանը գտնում է, որ ազգային օրենսդրության համաձայն՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքում ԲԴԽ-ի կողմից ընդունված որոշումները վերջնական են եւ ենթակա չեն բողոքարկման սովորական դատարաններում (տե՛ս Դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասը՝ մեջբերված վերոնշյալ 47-րդ պարբերության մեջ): Թեեւ հնարավոր է դիմել գործի վերաբացման համար, սա միեւնույն մարմնի առջեւ արտահերթ գանգատ է (տե՛ս վերելում՝ 48-րդ եւ 49-րդ պարբերությունները) եւ հետեւաբար չի համարվում ԲԴԽ-ի որոշումների դեմ բողոքարկման սովորական ընթացակարգ: Հետեւաբար ԲԴԽ-ն առաջին եւ միակ ատյանն է, որտեղ կարող է սահմանվել դատավորների կարգապահական պատասխանատվությունը: Այնուամենայնիվ, Դատարանը որոշել է, որ միայն այն փաստը, որ համապատասխան կարգապահական մարմնի որոշման հետագա դատական վերանայումը հնարավոր չէր, չի նշանակում, որ դիմումատուն մուտք չի ունեցել դատարան Եսկեյինենի գործով թեստի նպատակներով, ընդ որում, տվյալ կարգապահական մարմինը թեստի նպատակներով որակվում է որպես «դատարան» (որպես համեմատություն՝ Բիլգենն ընդդեմ Թուրքիայի [Bilgen v. Turkey]), թիվ 1571/07, § 71, 2021 թվականի մարտի 9): Այդ նպատակով Դատարանն ուսումնասիրում է՝ արդյոք կարգապահական մարմինը կատարել է դատական գործառույթ, ինչպես նաեւ ուսումնասիրում է նրա առջեւ գտնվող վարույթի բնույթը (տե՛ս Կամենոսն ընդդեմ Կիպրոսի [Kamenos v. Cyprus], թիվ 147/07 գործը, §§ 84-85, 2017 թվականի հոկտեմբերի 31): Հետեւաբար Դատարանը պետք է քննի, թե արդյոք ԲԴԽ-ն կարող է համարվել դատական գործառույթ իրականացնող «տրիբունալ»: Զանի որ տվյալ հարցն իր քաղաքացիական հայեցակետով սերտորեն կապված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիության հետ, վերջինս դատարան դիմելու թույլտվության ենթադրյալ բացակայության կապակցությամբ պետք է միացվի դիմումատուի գանգատի Էությունը (տե՛ս ստորեւ 101-119-րդ եւ 124-րդ պարբերությունները):

2. ԲԴԽ-ի ենթադրյալ ինստիտուցիոնալ անկախության բացակայության

հետ կապված իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը՝ հաշվի առնելով նրա ոչ դատավոր անդամների առաջադրումը եւ ընտրությունը

ա) Կողմերի փաստարկները

85. Կառավարությունը պնդում էր, որ դիմումատուն երկրի ներսում չի ներկայացրել իր բողոքները՝ կապված ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամների առաջադրման եւ ընտրության, ինչպես նաեւ գործադիր եւ օրենսդիր իշխանությունից այդ մարմնի ենթադրյալ անկախության բացակայության հետ: Մասնավորապես հիշատակելով Դատական օրենսգրքի 71-րդ հոդվածը եւ 88-րդ հոդվածի 4-րդ մասը (տե՛ս վերելում՝ 24-րդ եւ 33-րդ պարբերությունները)՝ նրանք վիճարկում էին, որ դիմումատուն կարող էր ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնել իր գործով ներկա բոլոր չորս ոչ դատավոր անդամների նկատմամբ՝ գանգատը միայն նախագահ Կ.Ա.-ի նկատմամբ ներկայացնելու փոխարեն:

86. Դիմումատուն ի պատասխան նշել է, որ ԲԴԽ-ի անկախության կապակցությամբ իր գանգատը վերաբերում է ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամների առաջադրմանը եւ ընտրությանը վերաբերող համակարգային խնդիրներին, որոնց համար ներպետական պաշտպանության միջոցներ առկա չէին: Դատական օրենսգրքի 71-րդ հոդվածը եւ 88-րդ հոդվածի 4-րդ մասը, որոնց վրա հիմնվում էր Կառավարությունը, վերաբերում էր ԲԴԽ-ի անդամի անաչառությունը վիճարկելու հնարավորությանը, այլ ոչ թե տվյալ մարմնի ինստիտուցիոնալ անկախությանը: Ավելին, Կառավարությունը որեւէ ապացույց չէր ներկայացրել իրավական պաշտպանության վերոհիշյալ միջոցի արդյունավետությունը տվյալ մարմնի անկախության բացակայության վերաբերյալ իր ներկայացրած գանգատի մասով ապացուցելու նպատակով:

բ) Դատարանի գնահատականը

87. Դատարանը վերահաստատում է, որ 35-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է սպառել իրավական պաշտպանության այն միջոցները, որոնք վերաբերում են առաջադրված խախտմանը եւ կարող են փոխհատուցել ենթադրյալ խախտումը: Տվյալ իրավական պաշտպանության միջոցների գոյությունը պետք է բավականաչափ հստակ լինի ոչ միայն տեսականորեն, այլեւ

գործնականում, հակառակ դեպքում դրանք չեն ունենա անհրաժեշտ մատչելիությունը եւ արդյունավետությունը, պատասխանող պետության խնդիրն է ապացուցել, որ այդ պայմանները բավարարված են (տե՛ս Արհմիության հարցերով ժնեւի համայնքն ընդդէմ Շվեյցարիայի [ՄՊ][Communauté genevoise d'action syndicale (CGAS) [GC]] , թիվ 21881/20, §§ 139 եւ 143, 2023 թվականի նոյեմբերի 27, եւ այնտեղ նշված վճիռները):

88. Անդրադառնալով սույն գործին՝ Դատարանը նախեւառաջ նկատում է, որ ԲԴԽ-ի կազմը եւ նրա անդամների ընտրության կարգը սահմանվել են Սահմանադրությամբ: Կառավարությունը չկարողացավ հիմնավորել, որ ԲԴԽ-ի ինստիտուցիոնալ անկախությունը գործադիր եւ օրենսդիր ճյուղերից կարող էր վիճարկվել Դատական օրենսգրքի համաձայն ինքնաբացարկի դիմում ներկայացնելու միջոցով, եւ որ այդ դիմումը կարող էր ունենալ որեւէ հաջողության հեռանկար: Դատարանը նշում է, որ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի ժամանակ ԲԴԽ-ն քվորում ուներ միայն այն դեպքում, երբ նիստին ներկա էր նրա ընդհանուր անդամների կեսից ավելին (տե՛ս վերելում՝ 35-րդ պարբերությունը): Եթե նույնիսկ ենթադրենք, որ կարող է պահանջվել ԲԴԽ-ի անդամների կեսի ինքնաբացարկը, ապա դա ակնհայտորեն անհնարին կդարձնի ԲԴԽ-ի կողմից դիմումատուի գործով որոշում կայացնելը: Փաստորեն, 71-րդ բաժնի 5-րդ կետի ձեւակերպումից բխում է, որ ԲԴԽ-ն կվերժեր այդ դիմումը (տե՛ս վերելում՝ 24-րդ պարբերությունը): Ավելին, Կառավարությունը չի հստակեցրել, որ այս դեպքում գոյություն ունի իրավական մեխանիզմ, որը հնարավորություն կտար փոխարինել ինքնաբացարկ ներկայացրած ԲԴԽ անդամներին: Դատարանը նաեւ նկատում է, որ Կառավարությունը հղում չի կատարել որեւէ համապատասխան ներպետական նախադեպային իրավունքի՝ ի պաշտպանություն իրենց փաստարկների (տե՛ս նմանատիպ մոտեցման համար վերելում հիշատակված՝ Կատանայի [Catanã] գործը, § 49): Ըստ այդմ, իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառնելու մասին Կառավարության առարկությունը պետք է մերժվի:

3. *Ընդունելիության վերաբերյալ եզրակացությունը*

89. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը համարում է, որ դիմումատուի

բողոքները (տե՛ս վերելում՝ 77-րդ պարբերությունը) ոչ ակնհայտորեն անհիմն են, ոչ էլ անընդունելի Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով: Չետեաբար դրանք պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Արդյոք ԲԴԽ-ն «անկախ եւ անաչառ դատարան» է

ա) Կողմերի փաստարկները

i) Դիմումատուն

90. Դիմումատուն նշել է, որ ԲԴԽ-ի կազմը չի համապատասխանում «անկախ եւ անաչառ դատարանի» պահանջներին եւ պնդել է, որ ԲԴԽ-ում ոչ դատավոր անդամի թեկնածուների առաջադրման ընթացակարգը չի ընթացել արժանիքահեն եւ թափանցիկ (նկատի ունենալով 2018 թվականի ՏՅԶԿ-ի հանձնարարականը եւ Դատական խորհուրդների վերաբերյալ ամփոփագիրը՝ ընդունված Դատական խորհուրդների եվրոպական ցանցի (ԴԽԵՑ) կողմից, վերելում հիշատակված՝ 74-րդ եւ 75-րդ պարբերություններում): Նա պնդել է, որ ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամի թեկնածուների թափուր տեղերի հայտարարություն չի եղել, եւ նրանց առաջադրումն ու ընտրությունը թողնվել է իշխող քաղաքական խմբի բացարձակ հայեցողությանը՝ առանց ընդդիմության հետ նախնական քննարկման: Քանի որ այդ խումբն ուներ սահմանադրական մեծամասնություն Ազգային ժողովում, ընդդիմադիր խմբի կողմից թեկնածու առաջադրելու ցանկացած փորձ ապարդյուն կլիներ: Այդ ընթացակարգը, հետեաբար, թույլ էր տալիս իշխող ուժին ընտրել եւ նշանակել ոչ դատավոր անդամներին՝ ելնելով նրանց քաղաքական հավատարմությունից: Դա տեղի էր ունեցել ԲԴԽ-ի բոլոր չորս ոչ դատավոր անդամների դեպքում, որոնք մասնակցել են գործի քննությանը:

91. Չետեաբար ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամները, որոնք կազմում էին այդ մարմնի անդամների ընդհանուր թվի կեսը, անկախություն չունեին ոչ միայն օրենսդիր, այլեւ գործադիր ճյուղերից, քանի որ Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող կուսակցությունը ձեւավորել էր Կառավարությունը: Այս առնչությամբ նա մատնանշել է Կ.Ա.-ի եւ Ե.Թ.-ի առաջադրման եւ նշանակման գործընթացը՝ ոչ դատավոր անդամների պաշտոնին, այն բանից հետո, երբ նրանք հրաժարվել էին իրենց պաշտոններից՝ համապատասխանաբար նախարարի եւ

արդարադատության փոխնախարարի պաշտոններից: Բացի այդ, դիմումատուն բողոք է ներկայացրել, որ ԲԴԽ-ի կազմում դատավորների զգալի ներկայացվածությունը, որը, ըստ նրա, ավելին էր, քան կեսը, չի ապահովվել, ինչը հակասում է կիրառելի չափանիշներին:

ii) Կառավարությունը

92. Կառավարությունը, անդրադառնալով ԲԴԽ-ի անդամների առաջադրման եւ ընտրության վերաբերյալ ներքին դրույթներին (Սահմանադրության 173-174-րդ հոդվածները նշված են վերելում՝ 20-րդ պարբերության մեջ, ինչպես նաեւ Դատական օրենսգրքի եւ Կանոնակարգի համապատասխան դրույթները հիշատակված են վերելում՝ 25-րդ, 27-րդ, 53-րդ եւ 54-րդ պարբերություններում), նշել է, որ ԲԴԽ-ի անկախությունն ապահովվում է իր ինստիտուցիոնալ կառուցվածքով: Անդրադառնալով Վենետիկի հանձնաժողովի կողմից Հայաստանի վերաբերյալ ընդունված համապատասխան կարծիքին (վերելում՝ 66 պարբերությունը)՝ նրանք պնդել են, որ ԲԴԽ-ի կազմը հավասարակշռված է եւ համապատասխանում է գործող միջազգային եւ եվրոպական չափանիշներին, որը կազմված է հավասար թվով դատավոր եւ ոչ դատավոր անդամներից, հետեւաբար դատավորները ներկայացնում էին նրա անդամների «զգալի մասը»: Դատավոր եւ ոչ դատավոր անդամների միջեւ հավասարությունը նպատակ ուներ խուսափել ինչպես քաղաքականացման ռիսկից, այնպես էլ դատական համակարգում կորպորատիվի եւ փորձագիտական պաշտպանության բացասական հետեւանքներից: Հավասարակշռության ապահովման նպատակներից ելնելով՝ Սահմանադրությունը երաշխավորել է տարբեր ատյանների դատարանների եւ դատավորների ներկայացվածությունը: Դատավոր անդամներն ընտրվել են Դատավորների ընդհանուր ժողովի կողմից, այսինքն՝ Խորհրդի կազմի կողմից (Սահմանադրության 174-րդ հոդվածի 2-րդ մասը նշված է վերելում՝ 20-րդ պարբերության մեջ): Այնքանով, որքանով դա վերաբերելի է ոչ դատավոր անդամներին, Ազգային ժողովը նրանց ընտրել է ձայների որակյալ մեծամասնությամբ՝ քաղաքական խմբերի, այդ թվում՝ ընդդիմության կողմից թեկնածու առաջադրելուց հետո՝ այդպիսով բացառելով իշխող կուսակցության վճռական ազդեցությունը (Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մասը նշված

Ե վերելում՝ 20-րդ պարբերության մեջ, ինչպես նաև Դատական օրենսգրքի եւ Կանոնակարգի համապատասխան դրույթները նշված են 25-րդ, 27-րդ, 53-րդ եւ 54-րդ պարբերություններում): Ոչ դատավոր անդամների ընտրությունը համահունչ էր Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման հետ, ըստ որի Դատական խորհրդի խորհրդարանական բաղադրիչը պետք է ընտրվի որակյալ մեծամասնությամբ:

93. Կառավարությունը պնդել է, որ ընթացակարգը եղել է արժանիքահեն եւ թափանցիկ չափորոշիչների վրա հիմնված: Ներպետական օրենսդրությունը որակավորման խիստ չափորոշիչներ է սահմանել հնարավոր թեկնածուների ընտրության համար (սույն տեղում, 26-րդ պարբերությունը), եւ յուրաքանչյուր քաղաքական խումբ թեկնածու առաջադրելու վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելիս պետք է ապացույցներ ներկայացնի, որոնք ցույց կտան թեկնածուի համապատասխանությունը նշված չափանիշներին (վերելում՝ 54-րդ պարբերությունը): Ավելին, ոչ դատավոր անդամի ընտրության ընթացակարգն անցկացվում է դռնբաց (վերելում՝ 55-րդ պարբերությունը), որի ընթացքում թեկնածուն ելույթ է ունեցել, եւ պատգամավորները նրան հարցեր են ուղղել՝ ստուգելու նրա համապատասխանությունը պաշտոնին (վերելում՝ 53-րդ պարբերությունը):

Բացի այդ, ԲԴԽ-ի անդամներն ունեին պաշտոնավարման կայունություն. նրանք ընտրվում էին հինգ տարի ֆիքսված ժամկետով, եւ նրանց լիազորությունները կարող էին դադարեցվել միայն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում՝ ենթարկվելով խիստ անհամատեղելիության պահանջներին, չպետք է զբաղվեին որեւէ վճարովի աշխատանքով՝ բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական գործունեության (վերելում՝ 20-րդ, 21-րդ եւ 31-րդ պարբերությունները): Ինչ վերաբերում է մասնավորապես ոչ դատավոր անդամներին, ապա նրանք ստանում էին բարձր աշխատավարձ, որը չէր կարող ավելի քիչ լինել, քան Վճռաբեկ դատարանի դատավորի աշխատավարձը (վերելում՝ 28-րդ պարբերությունը):

94. ԲԴԽ-ն յուրաքանչյուր գործի ելույթան վերաբերյալ որոշումներ է կայացրել ինքնուրույն՝ առանց գործադիր կամ օրենսդիր իշխանությունների միջամտության: ԲԴԽ-ի յուրաքանչյուր անդամ ուներ մեկ ձայնի իրավունք եւ կարող էր առանձին կարծիք հայտնել ԲԴԽ-ի որոշումների վերաբերյալ, երբ

հանդես էր գալիս որպես դատարան (վերելում՝ 37-րդ պարբերությունը): Ինչ վերաբերում է ԲԴԽ-ի նախագահող դատավորին, ապա նա ընտրվում է Խորհրդի կազմի կողմից ինչպես դատավոր, այնպես էլ ոչ դատավոր անդամներից եւ որպես նախագահող դատավոր հիմնականում իրականացնում է վարչական գործառույթներ՝ կարգապահական վարույթների ընթացքում առանց որոշիչ ձայնի իրավունքի (վերելում՝ 29-րդ պարբերությունը):

95. Ինչ վերաբերում է դիմումատուի գործով մասնակցած ոչ դատավոր անդամներին, ապա ընդդիմադիր քաղաքական խմբերը չեն առաջադրել որեւէ թեկնածու այդ անդամների առաջադրման եւ ընտրության ընթացքում, մի իրավունք, որը նրանք իրագործել են օրենքի շրջանակներում: Փաստորեն, ընդդիմադիրներից ոմանք կողմ են քվեարկել ոչ դատավոր անդամներ Վ.Բ.-ի եւ Յ.Գ.-ի օգտին (տե՛ս վերելում՝ 6-րդ պարբերությունը): Ինչ վերաբերում է անդամներ՝ Կ.Ա.-ին եւ Ե.Թ.-ին, ընդդիմությունը չի մասնակցել նրանց նշանակման գործընթացին (սույն տեղում): Ուստի նրանք չեն օգտվել թեկնածուներին հարցաքննելու եւ նրանց իրավասության վերաբերյալ կարծիքներ փոխանակելու իրավունքից: Միայն այն փաստը, որ վերոհիշյալ ոչ դատավոր անդամներն առաջադրվել են իշխող քաղաքական խմբի կողմից, որեւէ կերպ չի ազդում ԲԴԽ-ի անկախության վրա, եւ դիմումատուն չի ներկայացրել որեւէ ապացույց, որ նրանց նշանակումն այլ կերպ եղել է թերի կամ քաղաքականացված: Չի ներկայացվել նաեւ որեւէ ապացույց, որը ցույց կտար, որ ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամները նյութական, հիերարխիկ կամ վարչական կախվածություն ունեին իշխող կուսակցությունից: Այն փաստը, որ Կ.Ա.-ն եւ Ե.Թ.-ն զբաղեցրել են համապատասխանաբար նախարարի եւ արդարադատության փոխնախարարի պաշտոնները, չի շեղում այս եզրահանգումից, քանի որ նրանք առաջադրվել եւ նշանակվել են ԲԴԽ-ում իրենց մասնագիտական պատրաստվածության հիման վրա, իսկ նշանակվելուց հետո նրանց գործառույթները որպես գործադիր ճյուղի նախկին ներկայացուցիչներ դադարեցվել էին, եւ ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամների համար սահմանված համապատասխան երաշխիքներն ապահովել են նրանց անկախությունը: Ավելին, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՅ) իրականացրել է բարեվարքության ուսումնասիրություն Ե.Թ.-ի վերաբերյալ, եւ ի թիվս այլնի, պարզել է, որ նրա նախկինում փոխնախարար լինելու հանգամանքը չէր կարող կասկածի տակ դնել նրա անձեռնմխելիությունը ԲԴԽ-ի ոչ դատավորի անդամ ընտրվելու դեպքում (վերելում՝ 8-րդ պարբերությունը):

Վերջապես, եւ՛ Կ.Ա.-ն, եւ՛ Ե.Թ.-ն նշանակվել են ԲԴԽ-ում մինչեւ արդարադատության նախարարի կողմից դիմումատուի նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելը (վերելում՝ 6-րդ պարբերությունը), իսկ Կ.Ա.-ն՝ որպես նախագահող դատավոր, չուներ որոշիչ ձայնի իրավունք, որով նա կարող էր ազդել ԲԴԽ-ի որոշման վրա՝ դիմումատուի գործի վերաբերյալ (վերելում՝ 37-րդ պարբերությունը):

բ) Դատարանի գնահատականը

i) Ընդհանուր սկզբունքները

1) «Տրիբունալ»

96. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար տրիբունալը չպետք է լինի ստանդարտ դատական մեխանիզմի մեջ ինտեգրված դատարան (տե՛ս *Ռոլֆ Գոլստաֆսոնն ընդդեմ Շվեդիայի [Rolf Gustafson v. Sweden]*, 1997 թվականի հուլիսի 1, § 45, *Վճիռների եւ որոշումների հաշվետվություններ 1997-IV*, Դի Ջիովաննին ընդդեմ Իտալիայի [*Di Giovanni v. Italy*], թիվ 51160/06, § 52, 2013 թվականի հուլիսի 9, Էմինադաօցլուն ընդդեմ Թուրքիայի [*Eminağaoğlu v. Turkey*], թիվ 76521/12, § 90, 2021 թվականի մարտի 9, Կոտորան ընդդեմ Ռումինիայի [*Cotora v. Romania*], թիվ 30745/18, § 36, 2023 թվականի հունվարի 17), քանի որ տրիբունալը 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով բնութագրվում է այս եզրույթի նյութական իմաստով՝ իր դատական գործառույթով, այսինքն՝ անհրաժեշտ է որոշել իր իրավասության ներքո գտնվող հարցերը՝ հիմնվելով իրավունքի կանոնների վրա եւ հիմնվելով համապատասխան ընթացակարգով իրականացված դատավարության արդյունքների վրա (տե՛ս *Գոլմունդ Անդրի Աստրադսոնն ընդդեմ Իսլանդիայի [ՄԴ] [Guðmundur Andri Ástráðsson v. Iceland [GC]]* գործը, թիվ 26374/18, § 219, 2020 թվականի դեկտեմբերի 1): Որոշումներ կայացնելու լիազորությունը ներհատուկ է հենց «տրիբունալ» հասկացությանը: Գործի քննության ընթացակարգը պետք է ապահովի «վեճի ըստ ելության լուծումը», ինչպես պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով (տե՛ս *Բենթեմն ընդդեմ Նիդերլանդների [Benthem v. Netherlands]*, 1985 թվականի հոկտեմբերի 23, § 40, շարք Ա, թիվ 97, վերելում հիշատակված՝ *Բիլգենի [Bilgen]*, § 73 եւ Էմինադաօցլու [*Eminağaoğlu*] գործերը, § 90): Բացի այդ, միայն այն հաստատությունը, որն ունի

բացառիկ իրավասությունն եւ բավարարում է մի շարք պահանջներ, ինչպիսիք են անկախությունը գործադիր իշխանությունից, ինչպես նաեւ կողմերից, արժանի է «տրիբունալ» անվանմանը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով (նույն տեղում՝ *Օլույիչն ընդդեմ Խորվաթիայի [Olujic v. Croatia]*, թիվ 22330/05, § 37, 2009 թվականի փետրվարի 5, եւ *Գուդմունդսոնը Անդրի Աստրասոնի [Gudmundur Andri Astradsson]* գործերը, § 219)։

2) «Անկախ եւ անաչառ»

97. «Անկախություն» եւ «անաչառություն» հասկացությունները սերտորեն փոխկապակցված են եւ կախված հանգամանքներից՝ կարող են պահանջել համատեղ քննություն (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ռամոս Նունես դե Կարվալյո Է Սայի* [*Ramos Nunes de Carvalho e Sá*] գործը, §§ 150 եւ 152, տե՛ս նաեւ նրանց սերտ հարաբերությունների առնչությամբ §§ 153-56): Դատարանը որոշել է, որ «անկախությունը» վերաբերում է անաչառ որոշումների կայացման համար անհրաժեշտ անձնական եւ ինստիտուցիոնալ անկախությանը եւ հետեւաբար անաչառության նախապայման է: Այն բնութագրում է եւ՛ հոգեվիճակը, որը ցույց է տալիս դատավորի՝ արտաքին ճնշմանը չենթարկվելը՝ որպէս բարեվարքության ինդիք, եւ՛ ինստիտուցիոնալ եւ գործառնական մեխանիզմների շարքը՝ ներառելով դատավորների նշանակման ընթացակարգը, որով ապահովվում է նրանց անկախությունը, ինչպէս նաեւ արժանիքների վրա հիմնված ընտրության չափանիշները, որոնցով պետք է ապահովվի պաշտպանություն՝ պետական այլ ուժերի կողմից անհարկի ազդեցությունից եւ(կամ) հայեցողական լիազորություններից, ինչպէս դատավորի նշանակման սկզբնական փուլում, այնպէս էլ նրա պարտականությունների կատարման ընթացքում (տե՛ս վերելում հիշատակված՝ Գուդմունդուր Անդրի Աստրադսսոնի [*Gudmundur Andri Astradsson*] գործը, § 234): Այս պահանջի հետ համապատասխանությունը գնահատվում է մասնավորապէս օրենքով սահմանված չափանիշների հիման վրա, ինչպիսիք են տրիբունալի անդամների նշանակման կարգը եւ նրանց պաշտոնավարման ժամկետը, ինչպէս նաեւ արտաքին ճնշումների ռիսկի դեմ բավարար երաշխիքների առկայությունը: Հարցն այն մասին, թե արդյոք մարմինը ստեղծում է անկախության տեսություն, նույնպէս կարելու է (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ռամոս Նունես դե Կարվալյո Է Սայի* [*Ramos Nunes de Carvalho e Sa*], § 144, *Օլեքսանդր Վոլկովի* [*Oleksandr Volkov*], § 103 եւ *Գրեյս Գեթն ընդդէմ Մայթայի* [*Grace Gatt v. Malta*], թիվ 46466/16, § 85, 2019 թվականի հոկտեմբերի 8 գործերը):

98. Անհրաժեշտ է վերահաստատել, որ Դատարանի նախադեպային իրավունքում անկախության եւ անաչառության վերաբերյալ հաստատված սկզբունքները պետք է կիրառվեն նաեւ ժողովրդական դատավորների նկատմամբ նույն կերպով, ինչպէս պրոֆեսիոնալ դատավորների նկատմամբ (տե՛ս, համապատասխան փոփոխություններով, *Կուպերն ընդդէմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Cooper v. the United Kingdom* [GC]], թիվ 48843/99, § 123,

ՄԻԵԴ 2003-XII, *Հոլմս ընդդեմ Շվեդիայի* [Holm v. Sweden], 1993 թվականի նոյեմբերի 25, § 30, շարք Ա, թիվ 279-Ա եւ *Բելլիզիին ընդդեմ Մալթայի* [Bellizzi v. Malta] գործերը, թիվ 46575/09, § 51, 2011 թվականի հունիսի 21 եւ դրանում հիշատակված հղումները):

99. Դատարանը նաեւ անդրադառնում է այն չափանիշներին, որոնք օգտագործել է Դատական բարձրագույն խորհրդի անկախությունն ու անաչառությունը գնահատելու համար (տե՛ս վերելում հիշատակված՝ *Օլեքսանդր Վոլկովի* [Oleksandr Volkov], §§ 109-15 եւ *Դենիսովի* [Denisov] գործերը, §§ 68-69):

ii) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

100. Դատարանը նախեւառաջ նշում է, որ սույն գործով իրենից չի պահանջվում որոշում կայացնել որեւէ հնարավոր հարցի վերաբերյալ, որը բխում է այն փաստից, որ դիմումատուն ազատվել է աշխատանքից նրա՝ որպես դատավորի ընդունած որոշման համար: Դատարանը պետք է ուսումնասիրի, թե արդյոք ԲԴԽ-ն համապատասխանում է «անկախ եւ անաչառ դատարանի» պահանջներին:

1) Արդյոք կարող է ԲԴԽ-ն համարվել «տրիբունալ»
Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

101. Հակասություն չկա կողմերի միջեւ, որ ԲԴԽ-ն ստեղծվել է օրենքի հիման վրա, մասնավորապես՝ Սահմանադրությամբ, որի որակը՝ մատչելիությունը եւ կանխատեսելիությունը, չի վիճարկվել դիմումատուի կողմից:

102. Դատարանը եւս մեկ անգամ նկատում է, որ համաձայն ներպետական օրենսդրության՝ ԲԴԽ-ն ունի բացառիկ իրավասություն եւ լիիրավ լիազորություն՝ որոշելու դատավորների կարգապահական պատասխանատվության հարցերը, եւ սույն վարույթներում նա հանդես է գալիս որպես «դատարան» (տե՛ս Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասը եւ Դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նշված 20-րդ եւ 34-րդ պարբերություններում, ինչպես նաեւ հակադրի՛ր վերելում հիշատակված՝ *Մնացականյանի* [Mnatsakanyan] գործը, § 52): Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների ընթացակարգը մանրամասնորեն սահմանված է Դատական օրենսգրքում եւ անհրաժեշտության դեպքում՝ Վարչական դատավարության օրենսգրքում, իսկ ԲԴԽ-ի կողմից

կայացված որոշումները պետք է լինեն հիմնավորված (տե՛ս վերելում՝ 45-րդ, 47-րդ եւ 57-րդ պարբերությունները): ԲԴԽ-ի կողմից քննվող վարույթներն անցկացվում են դռնբաց՝ բացառությամբ դատական օրենսգրքով նախատեսված դեպքերի, եւ իրենց բնույթով մրցակցային են (տե՛ս վերելում՝ 34-րդ, 40-րդ եւ 45-րդ պարբերությունները): Դատական օրենսգիրքն այդ դատավորին ապահովում է համապատասխան մի շարք դատավարական իրավունքներով եւ հղում է կատարում Սահմանադրության համապատասխան հոդվածներին, որոնք ապահովում են արդար դատաքննության իրավունքը եւ ներառում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերին համարժեք երաշխիքներ (տե՛ս վերելում՝ 40-րդ, 45-րդ եւ 46-րդ պարբերությունները): Տվյալ դատավորն իրավունք ունի լսելու եւ իր փաստերը ներկայացնելու անձամբ կամ փաստաբանի միջոցով: ԲԴԽ-ն լսումներ է անցկացնում, հրավիրում եւ լսում է վկաներին, գնահատում է ապացույցները եւ որոշում է իրեն տրված հարցը՝ առաջնորդվելով իրավական սկզբունքներով (տե՛ս վերելում՝ 38-րդ, 45-րդ եւ 57-րդ պարբերությունները): Սահմանադրական դատարանը, 2019 թվականի նոյեմբերի 15-ի իր որոշմամբ վերլուծելով կիրառվող ներպետական դրույթները եւ ԲԴԽ-ում ընթացող դատավարությունը, եզրակացրել է, որ դատավորների նկատմամբ կարգապահական հարցերի առնչությամբ ԲԴԽ-ն իրականացնում է դատական գործառույթներ եւ որակվում է որպես « դատարան» (տե՛ս վերելում՝ 58-րդ պարբերությունը): Բացի այդ, Դատարանը նաեւ անդրադառնում է Վենետիկի հանձնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների եւ իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության (DGI) կողմից հայտնած համատեղ կարծիքին, ըստ որի՝ ԲԴԽ-ն ունի ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ դատավարական՝ դատական մարմին բնորոշ բոլոր էական բնութագրերը (տե՛ս վերելում՝ 68-րդ պարբերության մեջ նշված համապատասխան կարծիքի 19-րդ կետը):

103. Սույն գործի շրջանակներում, չնայած այն հանգամանքին, որ ԲԴԽ-ի կարգապահական որոշումները բողոքարկման ենթակա չեն, սակայն դիմումատուի գործը քննելիս եւ պարտադիր որոշում կայացնելիս ԲԴԽ-ն իրականացրել է դատական գործառույթ. այն ուներ բացառիկ իրավասություն՝ որոշում կայացնելու դիմումատուի կարգապահական պատասխանատվության եւ հարուցված վարույթների վերաբերյալ, որոնք իրենց բնույթով մրցակցային էին եւ համապատասխանում էին օրենքով նախատեսված ընթացակարգին (համեմատի՛ր վերելում հիշատակված՝ *Կոտորայի [Cotora]* գործը, § 37): Ի վերջո, ԲԴԽ-ի կողմից կայացված որոշումը, որը պետք է պատճառաբանված լիներ,

վերջնական եւ պարտադիր է եղել դիմումատուի համար (տե՛ս 19-րդ եւ 47-րդ պարբերությունները):

104. Դատարանը, հետեւաբար, համոզված է, որ ԲԴԽ-ն կարող է համարվել որպես «տրիբունալ» Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով: Դատարանը այժմ կանդրադառնա այն հարցին, թե արդյոք ԲԴԽ-ն «անկախ տրիբունալ» է այդ հոդվածի իմաստով՝ հաշվի առնելով վերը նշված ընդհանուր սկզբունքները:

2) ԲԴԽ-ի «անկախության» պահանջը

- *ԲԴԽ-ի անդամների նշանակման կարգը*

105. Դատարանը վերահաստատում է, որ կարգապահական մարմնի կազմում ոչ դատավոր անդամների ընդգրկումն ինքնին կասկածի տակ չի դնում այդ մարմնի՝ որպես տրիբունալի անկախությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով (տե՛ս *Le Compte, Leuven and De Meyere v. Belgium* գործը, 1981 թվականի հունիսի 23, §§ 57-58, շարք Ա, թիվ 43): Դատարանը հետեւաբար պետք է գնահատի, թե արդյոք ԲԴԽ-ի կազմավորման ձեւը, մասնավորապես՝ նրա ոչ դատավոր անդամների մասով, կարող է հանգեցնել այնպիսի արդյունքների, որոնք համարվում են Կոնվենցիայով նախատեսված՝ «անկախ տրիբունալ» լինելու իրավունքի նպատակի եւ եռության հետ անհամատեղելի:

106. Դատարանը այս կապակցությամբ նկատում է, որ ԲԴԽ-ն կազմված է եղել հավասար թվով դատավոր եւ ոչ դատավոր անդամներից: Դատավոր անդամներն ընտրվել են Դատավորների գլխավոր ասամբլեայի կողմից՝ իրենց խորհրդի կազմի անդամներից (հակադիր վերելում հիշատակված՝ *Oleksandr Volkov* գործը, § 111)՝ ապահովելով տարբեր դատական մարմինների հավասար ներկայացուցչությունը: Դիմումատուն չի վիճարկել նշանակման կարգը՝ կապված ԲԴԽ-ի դատավոր անդամների հետ, եւ առաջին հայացքից Դատարանը չի տեսնում որեւէ խնդիր այս առումով:

107. Ինչ վերաբերում է ոչ դատավոր անդամներին, ապա նրանք ընտրվել են Ազգային ժողովի կողմից՝ ձայների որակյալ մեծամասնությամբ՝ քաղաքական խմբերի կողմից առաջադրված թեկնածուների հիման վրա: Դիմումատուի այն

ենթադրությունը, որ նրանց նշանակման ընթացակարգն արժանիքահեն չէ, չի հաստատվում առկա նյութերով: Սահմանադրությունը եւ Դատական օրենսգիրքը սահմանել են հատուկ պահանջներ, որոնք վերաբերում են, ի թիվս այլնի, ոչ դատավոր անդամների թեկնածուների մասնագիտական հմտություններին եւ փորձին (տե՛ս Սահմանադրության եւ Դատական օրենսգրքի համապատասխան դրույթները՝ հիշատակված 20-րդ եւ 26-րդ պարբերություններում): Մասնավորապես ոչ դատավոր անդամի թեկնածուն պետք է լինի կամ իրավագետ, կամ վաստակաշատ իրավաբան՝ բարձր մասնագիտական որակավորմամբ եւ առնվազն տասնհինգ տարվա փորձով (համեմատի՛ր վերելում հիշատակված՝ *Դի Ջովաննիի* [Di Giovanni], § 19, եւ *Կատանայի* [Catanã] գործերը, § 80):

108. Ոչ դատավոր անդամի պաշտոնի համար թեկնածուների ընտրությունն ու առաջադրումը վստահվել է Ազգային ժողովի խմբակցություններին: Դատարանը նշում է, որ ի տարբերություն ՏՀԶԿ-ի հանձնարարականի (տե՛ս վերելում՝ 74-րդ եւ 90-րդ պարբերությունները)՝ չի հայտարարվել թափուր աշխատատեղերի մրցույթ ապագա թեկնածուների համար, այլ նրանց առաջադրումը վստահվել է խմբակցություններին: Այս առնչությամբ Դատարանը անդրադարձել է Վենետիկի հանձնաժողովի համապատասխան կարծիքին (տե՛ս վերելում՝ 65-րդ պարբերությունը, մասնավորապես՝ CDL-AD(2016)009, Վերջնական կարծիք՝ Ալբանիայի դատական համակարգի վերանայված սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ (2016 թվականի հունվարի 15), § 16), որտեղ նշվել էր, որ «քաղաքականությունից ձեռնպահ մնալը [կարող է] ապահովվել առաջադրման թափանցիկ եւ բաց գործընթացի միջոցով՝ ինքնավար առաջադրող մարմինների (համալսարաններ, հասարակական կազմակերպություններ, իրավաբանների ասոցիացիաներ եւ այլն) նախաձեռնությամբ, [եւ որ] այդ առաջադրման գործընթացը պետք է ապահովի, որ Խորհրդարանը [պարտավորվի] ընտրություն կատարել ամենաբարձր որակավորում ունեցող թեկնածուներից, ոչ թե նշանակված քաղաքական գործիչներից»: Թեեւ Հայաստանի իշխանություններն ի սկզբանե որոշել էին ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամների թեկնածությունների առաջադրումը վստահել «իրավաբաններին, բարձրագույն ուսումնական հաստատություններին եւ մասնագիտական ՀԿ-ներին» (տե՛ս վերելում՝ 66-րդ պարբերությունը), Դատարանին որեւէ տեղեկություն չի տրամադրվել, թե ինչու այդ մեխանիզմը հետագայում չի կիրառվել:

109. Դատարանը հաշվի է առնում, որ ոչ դատավոր անդամների առաջադրումը Ազգային ժողովում ներկայացված քաղաքական խմբերին վստահելը կարող է գործընթացի քաղաքականացման վտանգ ներկայացնել: Դա այդպես է, քանի որ, չնայած որակավորման պահանջներին, ներպետական օրենսդրությունում չկան որեւէ հատուկ կանոններ, որով կարգավորվում է խմբակցությունների կողմից թեկնածուների ընտրությունը: Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրությունը նախատեսում է որոշակի պաշտոնական երաշխիքներ՝ ապահովելու թեկնածուների համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված որակավորման պահանջներին: Մասնավորապես թեկնածու առաջադրելիս խմբակցությունը պետք է ապացույցներ ներկայացներ՝ հաստատելու, որ թեկնածուն համապատասխանում է այդ պահանջներին, հակառակ դեպքում Ազգային ժողովի նախագահը կվերադարձնե առաջադրումը՝ հիմնավորումներով (տե՛ս վերելում՝ 54-րդ պարբերությունը): Բացի այդ, թեւէ այս դրույթն ուժի մեջ է 2020 թվականից եւ տարածվում է Ե.Թ.-ի՝ ոչ դատավոր անդամի վրա, հատկանշական է, որ թեկնածուի գործը փոխանցվել է ԿԿՅ, որի անկախությունը դիմումատուն չի վիճարկել՝ բարեվարքության ուսումնասիրության նպատակով (տե՛ս վերելում՝ 8-րդ եւ 54-րդ պարբերությունները): Զվեարկությունից առաջ առաջադրող խմբակցության ներկայացուցիչը եւ թեկնածուն պետք է ելույթ ունենային ոչ դատավոր անդամի պաշտոնում վերջինիս համապատասխանության վերաբերյալ, եւ պատգամավորները իրավունք ունեին նրանց հարցեր տալու (տե՛ս վերելում՝ 53-րդ պարբերությունը): Ավելին, նշանակման ընթացակարգը հրապարակային է (տե՛ս վերելում՝ 55-րդ պարբերությունը): Ի վերջո, Ազգային ժողովը կարող էր ոչ դատավոր անդամ ընտրել միայն ձայների երեք հինգերորդով (հակադրի՛ր *Կատանայի [Catanã]* գործը, § 79):

110. Դատարանի խնդիրը չէ պայմանավորվող պետությանը ներկայացնել, թե որ մոդելն է առավել հարմար՝ դատավորների համար կարգապահական մարմիններ ստեղծելու նպատակով: Անշուշտ, Եվրոպայում կան բազմաթիվ տարբեր համակարգեր, այլ ոչ թե մեկ ստանդարտ մոդել, որին պետք է հետեւի ժողովրդավարական երկիրը նման խորհուրդ ստեղծելիս: Ավելի շուտ, Դատարանի խնդիրն է պարզել, թե արդյոք Պայմանավորվող պետության կողմից ընտրված թեկնածուների նշանակման եղանակը վտանգել է ԲԴԽ-ի անկախությունը: Այս կապակցությամբ Դատարանը վերահաստատում է, որ թեւէ քաղաքական

իշխանությունների եւ դատական համակարգի միջեւ լիազորությունների տարանջատման գաղափարը իր նախադեպային իրավունքում ձեռք է բերել մեծ նշանակություն, գործադիր կամ օրենսդիր իշխանությունների կողմից դատավորների ընտրությունը կամ նշանակումը թույլատրելի է Կոնվենցիայի համաձայն՝ պայմանով, որ ընտրվելուց կամ նշանակվելուց հետո նրանք գերծման ազդեցությունից կամ ճնշումից եւ իրականացնեն իրենց դատական գործունեությունը՝ լիակատար անկախությամբ (տե՛ս վերելում հիշատակված՝ *Սասիլոր-Լորմինես ընդդեմ Ֆրանսիայի* [*Sacilor-Lormines v. France*], թիվ 65411/01, § 67, ՄԻԵԴ 2006 XIII, *Ֆլուքս ընդդեմ Մոլդովայի* [*Flux v. Moldova*] (թիվ 2), թիվ 31001/03, § 27, 2007 թվականի հուլիսի 3, *Թիամն ընդդեմ Ֆրանսիայի* [*Thiam v. France*], թիվ 80018/12, § 80, 2018 թվականի հոկտեմբերի 18, եւ *Գոլմունդր Անդրի Աստրադսոնի* [*Guðmundur Andri Ástráðsson*] գործերը, § 207): Դատարանը համաձայն է դիմումատուի հետ, որ ապագա բոլոր թեկնածուներին հնարավորություն ընձեռելը՝ դիմելու ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամի պաշտոնի համար, օրինակ՝ բաց մրցույթով, կնպաստեր եւ կմեծացներ հետագա առաջադրման ընթացակարգի թափանցիկության աստիճանը: Ավելին, քաղաքացիական հասարակության կամ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների ներգրավումն այդ առաջադրման ընթացակարգում նույնպես կնպաստեր այդ նպատակին: Այնուամենայնիվ, Դատարանը համարում է, որ սույն գործի հանգամանքներում չի կարող համարվել, որ ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամների նշանակման կարգը վտանգել է այդ մարմնի անկախությունը: Մասնավորապես գոյություն ունեցող ինստիտուցիոնալ եւ գործառնական մեխանիզմները պաշտպանություն են ապահովել յուրաքանչյուր անհարկի ազդեցությունից կամ օրենքով վերապահված հայեցողական լիազորությունից, եւ գործընթացն ինքնին եղել է եւ՛ արժանիքահեն, եւ՛ թափանցիկ:

111. Թեեւ ցանկալի է քաղաքականության մեջ ներգրավված չլինելը ողջամիտ ժամկետով՝ մինչեւ ԲԴԽ-ում նշանակվելը (տե՛ս վերելում 75-րդ պարբերությունը), միայն այն փաստը, որ ոչ դատական անդամներ Կ.Ա.-ն եւ Ե.Թ.-ն ԲԴԽ-ում նշանակվելուց առաջ զբաղեցրել են բարձր պաշտոններ գործադիր իշխանությունում՝ համապատասխանաբար որպես Արդարադատության նախարար եւ փոխնախարար, այս առումով բավարար չէ, քանի որ ԲԴԽ-ում նշանակվելուց հետո նրանք այլեւս չեն պատկանում Կառավարությանը: Դատարանն ի գիտություն է ընդունում դիմումատուի փաստարկը՝ Դատական խորհրդի ոչ դատավոր անդամների ընտրության գործընթացում ընդդիմության ոչ

բավարար մասնակցության վերաբերյալ: Թեև այդ հանգամանքը որոշակի մտահոգություններ է առաջացնում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների առումով, այն բավարար չէ՝ եզրակացնելու համար, որ ԲԴԽ-ն չունի բավարար անկախություն: Դիմումատուն իր հերթին որեւէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ իր գործի քննությանը մասնակցած ոչ դատավոր անդամների նշանակումը որեւէ կերպ եղել է քաղաքական ազդեցության ենթակա: Թեև Դատարանը չի բացառում այն հանգամանքները, որ այդպիսի ապացույցներ կարող են ի հայտ գալ եւ ազդել իր ներկայիս եզրակացության վրա, նմանօրինակ սցենար չի կարող տեղ գտնել սույն գործում:

– *ԲԴԽ-ի անդամների նշանակման ժամկետները*

112. Ինչ վերաբերում է ԲԴԽ-ի անդամների նշանակման ժամկետներին, եւ՛ դատավոր, եւ՛ ոչ դատավոր անդամները նշանակվել են հինգ տարի ֆիքսված ժամկետով (տե՛ս վերելում հիշատակված՝ *Դի Ջովաննի [Di Giovanni]* գործը, § 19), որի ընթացքում օրենքով երաշխավորվել է նրանց անփոփոխելիությունը (համեմատի՛ր վերելում հիշատակված՝ *Գուդմունդուր Անդրի Աստրադսոնի [Guðmundur Andri Ástráðsson]* գործը, § 239):

- *Արտաքին ճնշման դեմ պաշտպանության երաշխիքների առկայությունը.*

113. Ինչ վերաբերում է արտաքին ճնշումների դեմ պաշտպանության երաշխիքների առկայությանը, ապա ԲԴԽ-ի անդամների նկատմամբ կիրառվում են անհամատեղելիության խիստ պահանջներ. նրանք պետք է լինեն ապաքաղաքական եւ չեն կարող զբաղվել որեւէ վճարովի աշխատանքով՝ բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական գործունեության (տե՛ս վերելում՝ 21-րդ պարբերությունը): Բացի այդ, դատավորների վարքագծի կանոնները պարտադիր են ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամների համար (տե՛ս վերելում՝ 23-րդ պարբերությունը): Այսպիսով, ապացուցված չէ, որ ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամներն ունեին որեւէ նյութական, հիերարխիկ կամ վարչական կախվածություն թե՛ գործադիր եւ թե՛ օրենսդիր իշխանությունից, որը կարող էր վտանգել նրանց անկախությունն ու անաչառությունը (հակադրի՛ր վերելում հիշատակված՝ *Օլեքսանդր Վոլկովի [Oleksandr Volkov]* գործը, § 113):

114. Դատարանը եւս մեկ անգամ ընդգծում է ներպետական օրենսդրությամբ սահմանված երաշխիքների կարեւորությունը, այն է՝ որ ԲԴԽ-ն հայեցողական լիազորություններ ունի իր կազմակերպչական կառուցվածքի եւ անձնակազմի վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում. այն գործադիր եւ օրենսդիր իշխանություններից ցուցումներ եւ ուղղություններ չի ստանում: Ի հավելումս, Դատարանը հաստատում է ծախսերի նախահաշիվը եւ ներկայացնում այն Կառավարություն՝ պետական բյուջեի նախագծում ներառելու համար (տե՛ս Սահմանադրության 175-րդ հոդվածի 9-րդ եւ 10-րդ մասերը՝ հիշատակված 20-րդ պարբերության մեջ):

115. Ինչ վերաբերում է ԲԴԽ-ի ներքին անկախությանը, ապա համաձայն ներպետական օրենսդրության՝ նախագահող դատավորի պաշտոնը հիմնականում վարչական բնույթ է կրում, եւ բոլոր համապատասխան որոշումները, որոնք վերաբերում էին ԲԴԽ-ին, այդ թվում՝ նրա անդամների կարգապահական պատասխանատվությունը, պետք է կայացվեին հենց ԲԴԽ-ի կողմից: ԲԴԽ-ի յուրաքանչյուր անդամ ուներ մեկ ձայնի իրավունք եւ կարող էր առանձին կարծիք հայտնել ԲԴԽ-ի որոշումների վերաբերյալ, երբ հանդես էր գալիս որպես դատարան (տե՛ս վերելում՝ 33-րդ եւ 37-րդ պարբերությունները): Ավելին, ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամները օգտվում էին դատավորների վրա տարածվող սոցիալական երաշխիքներից (տե՛ս վերելում՝ 28-րդ պարբերությունը):

116. Յետեւաբար գործող ինստիտուցիոնալ երաշխիքները այդ ժամանակահատվածում նպատակ ունեին մեկուսացնել ԲԴԽ-ին ուղղված թե՛ ներքին եւ թե՛ արտաքին ճնշումները:

– *Անկախության արտաքին հատկանիշները*

117. Ի վերջո, Դատարանը պետք է որոշի, թե արդյոք ԲԴԽ-ն ունեցել է անկախության արտաքին հատկանիշներ, քանի որ նույնիսկ արտաքին հատկանիշները կարող են կարեւորություն ունենալ, կամ այլ կերպ ասած, «արդարությունը ոչ միայն պետք է իրականացվի, այլ նաեւ լինի տեսանելի եւ հասկանալի»: Վտանգված է վստահությունը, որը ժողովրդավարական հասարակության դատարանները պետք է ներշնչեն հանրությանը (տե՛ս *Ռամոս Նունես դե Կարվալյո Է Սայի* [*Ramos Nunes de Carvalho e Sá*] գործը , § 149):

118. Անդրադառնալով սույն գործին՝ Դատարանը ներկայացնում է դիմումատուի փաստարկն առ այն, որ ԲԴԽ-ում դատավորների Էական ներկայացվածության *բացակայությունը*, որը, ըստ նրա, կազմում էր կեսից ավելին, վտանգում էր ԲԴԽ-ի անկախությունը (տե՛ս վերելում՝ 91-րդ պարբերությունը): Այս առնչությամբ Դատարանը վերահաստատում է, որ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների առնչությամբ միշտ ընդգծել է դատավորների Էական ներկայացվածության անհրաժեշտությունը դատական խորհրդում (տե՛ս վերելում հիշատակված՝ *Օլեքսանդր Վոլկովի [Oleksandr Volkov]*, § 109, *Դենիսովի [Denisov]* գործերը, §§ 68-69, *Խոխայն ընդդեմ Ալբանիայի [Xhoxhaj v. Albania]*, թիվ 15227/19, § 299, 2021 թվականի փետրվարի 9, *Գրզդեդայի [Grzęda]*, § 305 եւ *Կատանայի [Catană]* գործերը, § 68): Այդ պահանջն առավել կարելոր է դատավորների նկատմամբ սովորական կարգապահական վարույթի դեպքում (համեմատի՛ր *Խոխայի [Xhoxha]* գործը, § 299): Այնուամենայնիվ, հակառակ դիմումատուի փաստարկի, «Էական» եզրույթը երբեք չի ընկալվել Դատարանի կողմից որպես կեսից ավելին: Մասնավորապես Օլեքսանդր Վոլկովի [Oleksandr Volkov] գործով (վերելում հիշատակված՝ 109-րդ պարբերությունը) Դատարանը նշել է, որ եթե տրիբունալի անդամների առնվազն կեսը բաղկացած է դատավորներից, այդ թվում՝ նախագահող դատավորից, որն ունի որոշիչ ձայն, ապա դա անաչառության բարձր ցուցանիշ է (տե՛ս նաեւ վերելում հիշատակված՝ *Լը Կոմպտի, Վան Լյովենի եւ Դե Մեյերի [L. Compte, Van Leuven and De Meyere]* գործը, § 58): Թեեւ Դատարանը հաշվի է առնում այն փաստը, որ համաձայն Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) հանձնարարականների՝ դատական խորհուրդներում ցանկալի համամասնությունն այն է, որ նրանց կազմի Էական մեծամասնությունը պետք է կազմեն դատավորներ (տե՛ս վերելում՝ 69-րդ եւ 70-րդ պարբերությունները), գոյություն ունեցող եվրոպական նվազագույն ստանդարտն այն է, որ նրա անդամների առնվազն կեսը պետք է լինեն դատավորներ (տե՛ս վերելում հիշատակված՝ 63-րդ, 64-րդ, 65-րդ եւ 75-րդ պարբերությունները): Հայկական դատական համակարգի համար ընտրվել է դատավոր եւ ոչ դատավոր անդամների համաչափության սկզբունքը, ինչը Վենետիկի հանձնաժողովը նույնպես համարել է «բավականին հավասարակշռված» (տե՛ս վերելում հիշատակված՝ 66-րդ պարբերությունում նշված Հայաստանի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի համապատասխան կարծիքը): Դատարանն իր հերթին այդ առումով խնդիր չի տեսնում (համեմատի՛ր

Եւ հակադիր վերելում հիշատակված՝ *Օլեքսանդր Վոլկովի* [Oleksandr Volkov], §§ 110-12, *Դենիսովի* [Denisov] գործերը, § 70):

3) Եզրակացություն

119. Վերը նշվածի համատեքստում եւ չնայած 110-րդ պարբերությունում նշված թերություններին՝ Դատարանը ի զորու չէ կասկածի տակ դնել այդ երաշխիքների արդյունավետությունը, առավել եւս, որ դիմումատուն որեւէ ապացույց չի ներկայացրել, որ դրանք զուտ տեսական էին եւ չէին գործում գործնականում: Այսպիսով, Դատարանը եզրակացնում է, որ ԲԴԽ-ն բավարարել է «անկախ տրիբունալ» լինելու պաշտոնական պահանջները՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն: Ըստ այդմ, այդ առնչությամբ խախտում չի արձանագրվել:

2. Արդյո՞ք սահմանափակվել է դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքը:

ա) Կողմերի փաստարկները

120. Դիմումատուն բողոքել է, որ եթե Դատարանը գտնի, որ ԲԴԽ-ն բավարարում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ անկախ եւ անաչառ դատարանի պահանջները, ապա կսահմանափակվի նրա՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ իր հեռացումը սովորական դատարաններում բողոքարկելու անհնարինության պատճառով (հղում է կատարվել Եվրոպայի խորհրդի եւ դատարանների անկախության վերաբերյալ այլ նյութերի, ինչպես նաեւ Վենետիկի հանձնաժողովի եւ ԳՐԵԿՈՒ-ի Չայաստանի վերաբերյալ հատուկ հանձնարարականներին, վերելում՝ 63-րդ, 64-րդ, 67-րդ, 69-րդ, 73-րդ եւ 76-րդ պարբերություններում):

121. Կառավարությունն ի պատասխան ներկայացրել է, որ դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքին չի միջամտել, քանի որ ԲԴԽ-ն բավարարում էր անկախ եւ անաչառ դատարանի պահանջները:

բ) Դատարանի գնահատականը

i) Կիրառելի ընդհանուր սկզբունքները

122. Դատարանի մատչելիության իրավունքի ընդհանուր սկզբունքներն ամփոփվել են *Գրզեդայի* [Grzeda] (վերելում հիշատակված § 342) եւ *Չուբակն ընդդեմ Խորվաթիայի* [ՄՊ] [Zubac v. Croatia] [GC] գործերում, թիվ 40160/12, § 76, 2018 թվականի ապրիլի 5:

123. Դատարանի մատչելիության իրավունքը պարտադիր չէ, որ ընկալվի որպես օրենքի հիման վրա գործող դասական դատարանի մատչելիություն, որն ինտեգրված է երկրի ստանդարտ դատական մեխանիզմի մեջ. այսպիսով, «տրիբունալ» կարող է լինել մարմին, որը ստեղծվել է սահմանափակ թվով կոնկրետ հարցեր լուծելու համար՝ պայմանով, որ այն կտրամադրի համապատասխան երաշխիքներ (տե՛ս վերելում՝ 96-րդ պարբերությունում նշված համապատասխան նախադեպային իրավունքը, տե՛ս նաեւ *Բեգ Ս.պ.ա.-ն ընդդեմ Իտալիայի* [Beg S.p.a. v. Italy], թիվ 5312/11, § 126, 2021 թվականի մայիսի 20, եւ *Դոնեւն ընդդեմ Բուլղարիայի*, [Donev v. Bulgaria] թիվ 72437/11, § 83, 2021 թվականի հոկտեմբերի 26) : Դատարանն այնուհետեւ վճռել է, որ դատական մարմինը, որը չի բավարարում անկախության պահանջները, մասնավորապես՝ գործադիր իշխանությունից, եւ անաչառության պահանջները, չի կարող նույնիսկ համարվել «տրիբունալ»՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներով (վերելում հիշատակված՝ *Գոլմունդուր Անդրի Աստրադսոնի* [Guðmundur Andri Ástráðsson] գործը, § 232):

ii) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

124. Ինչպես արդեն հաստատվել է վերելում հիշատակված՝ 101-119-րդ պարբերություններում, թեեւ ԲԴԽ-ն չի կազմում Հայաստանի ստանդարտ դատական համակարգի մաս, այն բավարարում է «տրիբունալ» հասկացության պահանջները՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով. այն ստեղծվել է օրենքով սահմանված կարգով եւ լիազորված է սահմանելու դատավորների կարգապահական պատասխանատվությունը, այդ թվում՝ նրանց հեռացումը՝ համապատասխան օրենքով նախատեսված կարգով: Նրա որոշումները պետք է լինեն պատճառաբանված եւ պարտադիր տվյալ դատավորի համար: ԲԴԽ-ն, ի վերջո, «անկախ» տրիբունալ է՝ ինստիտուցիոնալ առումով: Այսպիսով, դիմումատուի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքում ԲԴԽ-ն գործել է որպես «դատարան», որի մատչելիության իրավունք դիմումատունն չի ունեցել՝

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներով:

125. Ինչ վերաբերում է դիմումատուի բողոքին այն մասին, որ նույնիսկ եթե ԲԴԽ-ն բավարարում է «անկախ դատարան» լինելու ինստիտուցիոնալ պահանջները, այն դատավորը, որի կարգապահական պատասխանատվությունը որոշվել է, ամեն դեպքում պետք է իրավունք ունենար բողոքարկելու այդ որոշումը սովորական դատարաններում (տե՛ս վերելում՝ 120-րդ պարբերությունը). Դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետից որեւէ բողոքարկման իրավունք չի կարող բխել, մասնավորապես՝ քաղաքացիական վարույթների առնչությամբ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության* [Tolstoy Miloslavsky v. the United Kingdom], 1995 թվականի հուլիսի 13, § 59, շարք Ա, թիվ 316-Բ, *Ֆրանեկն ընդդեմ Սլովակիայի* [Franek v. Slovakia], թիվ 14090/10, § 42, 2014 թվականի փետրվարի 11, եւ *Դուրիսոտտոն ընդդեմ Իտալիայի* [Durisotto v. Italy] գործերը (dec.), թիվ 62804/13, § 53, 2014 թվականի մայիսի 6): Դատարանը վերահաստատում է, որ վերջին հոդվածը չի պարտավորեցնում Պայմանավորվող պետություններին ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ (տե՛ս վերելում հիշատակված՝ Գրոսամն ընդդեմ Չեխիայի Հանրապետության [ՄՊ] [Grosam v. the Czech Republic [GC]], թիվ 19750/13, § 136, 2023 թվականի հունիսի 1, եւ *Կոտորայի* [Cotora] գործերը, § 45):

126. Դատարանը հաշվի է առնում այն փաստը, որ ինչպես Վենետիկի հանձնաժողովը, այնպես էլ GRECO-ն, առաջարկել են, որ Հայաստանի իշխանությունները սահմանեն բողոքարկման ընթացակարգ ԲԴԽ-ի որոշումների դեմ դատավորին ենթարկելով կարգապահական պատասխանատվության (տե՛ս վերելում՝ 67-րդ, 68-րդ, 71-րդ եւ 73-րդ պարբերությունները): Բացի այդ, Եվրոպայի խորհրդի եւ այլ միջազգային նյութերով, որոնք նշված են վերելում՝ 63-69-րդ եւ 76-րդ պարբերություններում, առաջարկվում է դատավորների դեմ կարգապահական հարցերով բողոքարկելու իրավունք կամ իրավազրոյության երկրորդ աստիճան:

127. Դատարանը նշում է, որ սույն գործի հանգամանքներից ելնելով՝ 2023 թվականի հոկտեմբերին Ազգային ժողով է ներկայացվել Դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, որը նախատեսում է ԲԴԽ-ում

վերաքննիչ բողոքարկման ընթացակարգ (տե՛ս վերելում՝ 73-րդ պարբերությունը): Թեեւ խնդրո առարկա փոփոխություններն ընդունվել են, կողմերը չեն նշել, թե արդյոք դրանք ուժի մեջ մտել են, թե՛ ոչ (տե՛ս վերելում՝ 52-րդ պարբերությունը): Ամեն դեպքում, ինչպես արդեն նշվել է վերելում՝ 101-119-րդ եւ 124-րդ պարբերություններում, ԲԴԽ-ն որակվում է որպես «դատարան», որին դիմելու մատչելիության իրավունք է ունեցել դիմումատուն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներով: Այսպիսով, վերոնշյալ նկատառումները հաշվի առնելով, սովորական դատարաններում ԲԴԽ-ի որոշումների լրացուցիչ վերանայման բացակայությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի մասով որեւէ խնդիր չի առաջացնում:

128. Վերը նշվածի համատեքստում Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուն «դատարան»-ի մատչելիության իրավունք է ունեցել՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, որը պարզվել է, որ կիրառելի է նրա քաղաքացիական գործով:

129. Չետեւաբար այդ առումով դիմումատուի իրավունքների խախտում չի արձանագրվել:

3. Արդյո՞ք ԲԴԽ-ն չի դրսեւորել անհրաժեշտ անաչառություն՝ համաձայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ նախագահող դատավոր Կ.Ա.-ի մասնակցության պատճառով:

ա) Կողմերի փաստարկները

130. Դիմումատուն մասնավորապես բողոքել է, որ մինչ ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամի եւ նախագահող դատավորի պաշտոնում ընտրվելը Կ.Ա.-ն զբաղեցրել է արդարադատության նախարարի պաշտոնը, իսկ դիմումատուի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցած արդարադատության նախարար Գ.Ս.-ն եղել է նրա տեղակալը, «ընկեր»-ը ու «նախկին բիզնես գործընկեր»-ը, ինչպես ինքն էր նշել իր հարցաքննության ժամանակ որպես այդ ժամանակվա Արդարադատության նախարար (տե՛ս վերելում՝ 14-րդ պարբերությունը): Բացի այդ, տեղի փաստաբանական ընկերության (նույն տեղում) բաժնետոմսերի համապատասխանաբար քառասուն եւ վաթսուն տոկոսը պատկանել են Կ.Ա.-ի կնոջը եւ Գ.Ս.-ին: Ըստ դիմումատուի՝ չնայած Գ.Ս.-ն իր բաժնետոմսերը

փոխանցել է հավատարմագրային կառավարման, նա շարունակել է շահույթ ստանալ փաստաբանական ընկերության գործունեությունից՝ որպես դրա սեփականատեր: Դիմումատուն ենթադրել է, որ Կ.Ա.-ն ուղղորդել է նաեւ ԲԴԽ-ի կազմին՝ ընդունելու որոշակի դիրքորոշում իր գործի վերաբերյալ (վերելում՝ 17-րդ պարբերությունը): Միեւնույն ժամանակ նա պնդել է, որ Կ.Ա.-ի անաչառությունը՝ նույնիսկ այդ ուղղորդման բացակայության պայմաններում, վտանգել է ԲԴԽ-ի ամբողջ կազմին՝ հաշվի առնելով նրա մասնագիտական, անձնական եւ տնտեսական կապերը Գ.Մ.-ի հետ: Դիմումատուի կարծիքով, ԲԴԽ-ի կողմից իր որոշման մեջ հղում կատարած «Ռուսթավի 2 հեռարձակող ընկերություն» ՍՊԸ-ի եւ այլոց գործը (վերելում հիշատակված) տարբերվում էր իր գործից, մինչդեռ ԲԴԽ-ի կողմից հղում կատարած այլ նախադեպեր իրականում հաստատում էին իր պնդումները:

131. Կառավարությունն ի պատասխան ներկայացրել է, որ ներպետական օրենսդրությունը բավարար երաշխիքներ է ապահովում՝ առանձնացնելով ԲԴԽ-ի անդամի անաչառության ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ գործոնները (վերելում՝ 24-րդ եւ 33-րդ պարբերությունները): Չի վիճարկվել, որ Կ.Ա.-ն որեւէ անձնական կողմնակալություն է դրսեւորել դիմումատուի նկատմամբ: Ինչ վերաբերում է Գ.Մ.-ի հետ նրա ենթադրյալ տնտեսական կապերին, ապա այս կարգապահական վարույթը կամ դրանց արդյունքները չեն ունեցել ազդեցություն Կ.Ա.-ի կամ Գ.Մ.-ի տնտեսական շահերի վրա: Ավելին, Գ.Մ.-ն Կ.Ա.-ի կողք հետ ունեցած բիզնեսի իր բաժնեմասը հանձնել է հավատարմագրային կառավարման եւ ըստ օրենքի՝ իրավունք չի ունեցել ազդելու իր բաժնետոմսերի կառավարման վրա: Կառավարությունը եւս մեկ անգամ շեշտել է, որ նախագահող դատավորի գործառույթները զուտ վարչական են, եւ որ ձայների հավասարության դեպքում նա չունի որոշիչ ձայն: Դիմումատուն նաեւ որեւէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ Կ.Ա.-ն որեւէ կերպ ազդել է իր գործի քննությանը մասնակցած ԲԴԽ-ի դատավորների կազմի վրա: Ավելին, Գ.Մ.-ի գանգատների հիման վրա հարուցված մի շարք գործերով Կ.Ա.-ն հետ է կանչվել, քանի որ կային հիմքեր, որոնք կարող էին կասկածի տակ դնել նրա օբյեկտիվ անաչառությունը: Մասնավորապես այդ գործերից երեքը վերաբերել են կարգապահական վարույթին, որում Կ.Ա.-ն ներգրավված էր նախկինում արդարադատության նախարարի պաշտոնում եղած ժամանակ, սակայն չորրորդ գործով նա հետ է կանչվել, քանի որ որոշակի քննարկում է ունեցել դատավորի հետ, որի կարգապահական

պատասխանատվության հարցը վիճարկվում էր, ինչն ակնհայտորեն վտանգել է սույն գործում նրա օբյեկտիվ անաչառությունը: Կառավարությունը, հետեւաբար, եզրակացրել է, որ այդ առնչությամբ դիմումատուի կասկածները բավարար չեն Կ.Ա.-ի անաչառությունը կասկածի տակ դնելու համար, եւ, որ դիմումատուի դեմ կարգապահական վարույթի ընթացքում Կ.Ա.-ն եւ Գ.Մ.-ն պարզապես կատարել են իրենց պարտականությունները: Ի վերջո, Կառավարությունը ներկայացրել է, որ «Ռուսթավի 2 հեռարձակող ընկերություն» ՍՊԸ-ի եւ այլոց [*Rustavi 2 Broadcasting Company Ltd and Others*] (հիշատակված է վերեւում) գործով սահմանված սկզբունքները նույն կերպ կիրառելի են դիմումատուի գործով, հատկապես, որ դիմումատուի վերաբերյալ որոշումը ընդունվել է միաձայն (վերեւում՝ 18-րդ պարբերությունը): Նրանք եւս մեկ անգամ անդրադարձել են Բանգալորյան սկզբունքների մեկնաբանությանը՝ նկատի ունենալով, որ «դատավորի ինքնաբացարկ չի պահանջվում, եթե որեւէ այլ տրիբունալ չունի գործը քննելու համար անհրաժեշտ կազմը» (վերեւում՝ 61-րդ պարբերությունը): Նրանք պնդում էին, որ նման վիճարկումները Կ.Ա.-ի դեմ արհեստականորեն փոխելու էին ԲԴԽ-ի կազմը յուրաքանչյուր գործով, որը ներկայացվել է արդարադատության նախարար Գ.Մ.-ի կողմից:

բ) Դատարանի գնահատականը

i) Անաչառության վերաբերյալ ընդհանուր սկզբունքները

132. «Անաչառություն» սովորաբար նշանակում է կանխակալության կամ կողմնակալության ու դրա տարբեր ձեւերով դրսեւորումների բացակայություն: Համաձայն Դատարանի հաստատված նախադեպային իրավունքի՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի նպատակների համար անաչառության առկայությունը պետք է որոշվի՝ համաձայն i) սուբյեկտիվ գնահատման, որտեղ պետք է հաշվի առնվի կոնկրետ դատավորի անձնական համոզմունքը եւ վարքագիծը, այն է՝ արդյոք դատավորը որեւէ անձնական նախապաշարմունք կամ կողմնակալություն է ունեցել տվյալ գործով, եւ ii) օբյեկտիվ գնահատման, այսինքն՝ պարզելով, թե արդյոք դատարանն ինքը եւ, ի թիվս այլ հայեցակետերի, դրա կազմը, բավարար երաշխիքներ են տվել՝ բացառելու իր անաչառության վերաբերյալ ցանկացած իրավաչափ կասկած (տե՛ս, օրինակ, վերեւում հիշատակված՝ *Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի* [ՄՊ] [*Kyprianou v. Cyprus* [GC]], թիվ 73797/01, § 118, ՄԻԵԴ 2005-XIII, եւ Միկալլեֆն ընդդեմ Մալթայի [ՄՊ] [*Micallef v. Malta* [GC]] գործերը, թիվ 29369/10, § 73 -78, ՄԻԵԴ 2015):

133. Այնուամենայնիվ, անաչառության այդ սուբյեկտիվ եւ օբյեկտիվ գործոնները հստակորեն տարբերակված չեն, քանի որ դատավորի վարքագիծը ոչ միայն կարող է արտաքին դիտորդի մոտ օբյեկտիվ կասկածներ առաջացնել տրիբունալի անաչառության վերաբերյալ (օբյեկտիվ գնահատում), այլև կարող է վկայել դատավորի անձնական համոզմունքի մասին (սուբյեկտիվ գնահատում) (տե՛ս վերելում հիշատակված ` *Կիպրիանուի [Kyprianou]* գործը, § 119): Որոշ դեպքերում, երբ դժվար է ձեռք բերել ապացույցներ, որոնք կհերքեն դատավորի սուբյեկտիվ անաչառության կանխավարկածը, օբյեկտիվ անաչառության պահանջը տրամադրում է լրացուցիչ կարելոր երաշխիք (տե՛ս *Պուլլարն ընդդեմ Միացյալ Թագավորության [Pullar v. the United Kingdom]*, 1996 թվականի հունիսի 10, § 32, Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ, 1996-III, եւ *Օտեգի Մոնդրագոնն ընդդեմ Իսպանիայի [Otegi Mondragon v. Spain]* գործերը, թիվ 4184/15 եւ 4 մյուս գործերը, § 54, 2018 թվականի նոյեմբերի 6):

134. Արտաքին հատկանիշները թեեւ որոշակի նշանակություն ունեն, բայց դրանք ինքնին որոշիչ չեն: Պարբերաբար անհրաժեշտ է ավելի լայն դիտարկել, քան արտաքին հատկանիշներն են, եւ կենտրոնանալ իրավիճակի իրողությունների վրա (տե՛ս *Պարլով-Տկալչիչն ընդդեմ Խորվաթիայի [Parlov-Tkalčić v. Croatia]*, թիվ 24810/06, § 83, 2009 թվականի դեկտեմբերի 22): Այսպիսով, պարզելու համար, թե արդյոք դիմումատուի անաչառության վերաբերյալ ենթադրյալ վախերն օբյեկտիվորեն հիմնավորված են, անհրաժեշտ է արտաքին հատկանիշները ստուգել օբյեկտիվ իրողությունների հետ համեմատությամբ (տե՛ս *Թադիչն ընդդեմ Խորվաթիայի [Tadić v. Croatia]* գործը, թիվ 25551/18, § 61, 2023 թվականի նոյեմբերի 28):

ii) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

135. Սույն գործով Դատարանը չի համարում, որ առկա է անաչառության սուբյեկտիվ գործոնի հարց: Դատարանը, հետեւաբար, կդիտարկի նախագահող դատավոր Կ.Ա.-ի անաչառության հարցը օբյեկտիվ գնահատման լույսի ներքո:

136. Կողմերի միջեւ հակասություն չկա այն մասով, որ այդ ժամանակ գործող Արդարադատության նախարար Գ.Մ.-ն, որը կարգապահական վարույթ է հարուցել ԲԴԽ-ում դիմումատուի նկատմամբ եւ հետեւաբար պետք է համարվի սույն վարույթների կողմերից մեկը, եղել է Կ.Ա.-ի տեղակալը, մինչդեռ վերջինս եղել

Ե Արդարադատության նախարար 2021 թվականի օգոստոսի 3-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 5-ը (տե՛ս վերելում՝ 7-րդ պարբերությունը): Ավելին, Կառավարությունը չի վիճարկել, որ նրանք եղել են նաեւ ընկերներ, ինչպես հայտարարել է Կ.Ա.-ն, ինչպես նաեւ Գ.Մ.-ն եւ Կ.Ա.-ի կինը ունեցել են ընդհանուր բիզնես շահ փաստաբանական ընկերությունում: Դատարանը ի գիտություն է ընդունում այն փաստը, որ Գ.Մ.-ն իրավաբանական ընկերության իր բաժնեմասը հանձնել է հավատարմագրային կառավարման, եւ ինչպես նշված է ԲԴԽ-ի որոշման մեջ, այլևս ներգրավված չէ բիզնեսի կառավարման մեջ: Ավելին, ԲԴԽ-ի կողմից դիտարկված վեճը որեւէ առնչություն չունի Գ.Մ.-ի եւ Կ.Ա.-ի կնոջ տնտեսական շահերի հետ (համեմատի՛ր եւ հակադրի՛ր *Խորվաթիայի գոլֆի ֆեդերացիան ընդդեմ Խորվաթիայի* [*Croatian Golf Federation v. Croatia*] գործը, թիվ 66994/14, §§ 129-33, 2020 թվականի դեկտեմբերի 17): Սակայն փաստը մտում է փաստ, որ Կ.Ա.-ն եւ Գ.Մ.-ն եղել են ընկերներ, եւ ինչպես պնդել է դիմումատուն, եւ Կառավարությունը չի վիճարկել, նրանց ընտանիքները, ըստ երեւույթին, ունեցել են եկամտի ընդհանուր աղբյուր, քանի որ, չնայած Գ.Մ.-ն այլևս չի պահպանել որեւէ ազդեցություն Կ.Ա.-ի կնոջ հետ ունեցած բիզնեսում, նա դեռևս հանդիսացել է այդ ընկերության բաժնետոմսերի սեփականատերը (տե՛ս վերելում՝ 56-րդ պարբերությունը) եւ համապատասխանաբար Կ.Ա.-ի «բիզնես գործընկեր»-ը՝ թեկուզեւ Կ.Ա.-ի կնոջ փաստաբանական ընկերության միջոցով (տե՛ս վերելում՝ 14-րդ պարբերությունը): Կ.Ա.-ի հարցաքննությունից պարզ է դառնում նաեւ, որ իր եւ Գ.Մ.-ի ընկերական մտերմությունը հանգեցրել է վերջինիս որպես իր տեղակալի նշանակմանը՝ Արդարադատության նախարարի նախկին պաշտոնում եղած ժամանակ (սույն տեղում): Այդ բոլոր փաստերը վկայում են Կ.Ա.-ի եւ Գ.Մ.-ի շատ սերտ հարաբերությունների մասին, որոնք դուրս են գալիս մասնագիտական հարաբերությունների շրջանակներից որպես նախկին գործընկերներ (համեմատի՛ր եւ հակադրի՛ր *Ստեկ-Ռիշը եւ այլք ընդդեմ Լիխտենշտեյնի* [*Steck-Riesch and Others v. Liechtenstein*], թիվ 63151/00 գործը, § 48, 2005 թվականի մայիսի 19): Յետևաբար, Դատարանի կարծիքով, Գ.Մ.-ի (գործով կողմ հանդիսացող) եւ Կ.Ա.-ի (դատական գործառույթներ իրականացնող մարմնի անդամ) մտերմիկ հարաբերություններն այնպիսի բնույթ ունեին, որ դրանք կարող էին Կ.Ա.-ի անաչառության հետ կապված կասկածներ առաջացնել (համեմատի՛ր վերելում հիշատակված՝ *Միկալլեֆի* [*Micallef*], § 102, եւ *Կուլիասն ընդդեմ Կիպրոսի* [*Koulias v. Cyprus*] գործերը, թիվ 48781/12, § 61, 2020 թվականի մայիսի 26): Այս առումով Դատարանը անդրադարձ է կատարում նաեւ

Բանգալորյան սկզբունքների մեկնաբանությանը, մասնավորապես՝ դրա 90-րդ պարբերությանը, ըստ որի «կողմնակալության հիմնավոր մտավախություն կարող է առաջանալ, երբ դատավորի եւ գործով ներգրավված հասարակության որեւէ անդամի միջեւ առկա է անձնական մտերմություն» (տե՛ս վերելում՝ 62-րդ պարբերությունը): Հաշվի առնելով արտաքին հատկանիշի կարեւորությունը՝ այդպիսի հանգամանքի առաջացման դեպքում (որը կարող է հանգեցնել առաջարկի կամ կողմնակալության դրսեւորման) այն պետք է բացահայտվի վարույթի սկզբում եւ պետք է գնահատվի՝ հաշվի առնելով առկա տարբեր գործոններ՝ որոշելու, թե արդյոք սույն գործով ինքնաբացարկ հայտնելու փաստացի անհրաժեշտություն կար, թե՛ ոչ: Սա կարելու ընթացակարգային երաշխիք է, որն անհրաժեշտ է թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ անաչառության նկատմամբ համարժեք երաշխիքներ ապահովելու համար (տե՛ս վերելում հիշատակված՝ *Կուլիասի [Koulias]* գործը, § 63): Ավելին, Դատարանը նկատում է, որ վիճարկելի կարգապահական վարույթը դիմումատուի դեմ հարուցվել է Կ.Ա.-ի՝ Արդարադատության նախարարությունից հեռանալուց ավելի քիչ, քան երկու ամիս անց, որտեղ նա այն կառույցի գլուխն էր, որը, ինչպես կառավարական նախարարությունների մեծ մասը, հիերարխիկ կառույց էր (համեմատի՛ր *Ուգուլավան ընդդեմ Վրաստանի [Ugulava v. Georgia]* (թիվ 2), թիվ 22431/20, § 60, 2024 թվականի փետրվարի 1), եւ նրա գործառույթներից մեկը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելն էր: Չնայած վիճարկելի կարգապահական վարույթները դիմումատուի նկատմամբ հարուցվել էին այն ժամանակ, երբ Կ.Ա.-ն այլեւս Արդարադատության նախարար չէր, նախարարությունը դիմել է Ամիրխանյանի [Amirkhanyan] գործի կյուլթերը ստանալու համար եւ ստացել այն Դատական դեպարտամենտից, երբ Կ.Ա.-ն դեռեւս զբաղեցնում էր նախարարի պաշտոնը (տե՛ս վերելում՝ 12-13-րդ պարբերությունները): Այս ամենը, զուգակցված Կ.Ա.-ի Արդարադատության նախարարությունից հեռանալու եւ Գ.Մ.-ի նրա պարտականությունները ստանձնելու ու դիմումատուի դեմ կարգապահական վարույթներ հարուցելու միջեւ կարճ ժամանակահատվածի հետ, կարող է օբյեկտիվ դիտորդի մոտ առաջացնել կասկածներ, որ Կ.Ա.-ն հակված կլիներ ընդունել իր նախկին ենթակայի եւ ընկերոջ գանգատը (համեմատի՛ր նույն տեղում, § 62):

137. Դատարանը նշել է, որ Կ.Ա.-ն ԲԴԻ-ի կազմից իրեն բացառելու որոշման կայացման ժամանակ ԲԴԻ-ին չի տեղեկացրել իր եւ Գ.Մ.-ի ընկերական եւ իր

կնոջ եւ Գ.Մ.-ի միջեւ եղած բիզնես հարաբերությունների մասին, ինչպես պահանջվում է Դատական օրենսգրքի 71-րդ եւ 88-րդ հոդվածներով: Կ.Ա.-ի եւ Գ.Մ.-ի միջեւ նույնիսկ ֆինանսական ուղիղ կապի բացակայության պայմաններում միայն այն փաստը, որ նրանք եղել են ընկերներ, եւ այն, որ Կ.Ա.-ի կինը եւ Գ.Մ.-ն ունեցել են համատեղ բիզնես շահեր, պետք է նրա ուշադրությունը գրավեր այնքանով, որ իր անաչառությունը կարող էր դրվել կասկածի տակ եւ Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով այդ մասին պետք է ծանուցվեր (համեմատիր *Նիկոլովն ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավիական Հանրապետության [Nikolov v. the former Yugoslav Republic of Macedonia]*, թիվ 41195/02, § 25, 2007 թվականի դեկտեմբերի 20):

138. Դատարանն ընդունում է, որ այն փաստերը, որոնց անդրադարձել էր դիմումատուն՝ ի աջակցություն իր պահանջին՝ կապված այն ժամանակ նախագահող դատավոր Կ.Ա.-ի հետ, իրենից ներկայացնում էր վիճարկելի պահանջ՝ անաչառության բացակայության վերաբերյալ: Այս համատեքստում, ստանալով իր՝ որպես նախագահող դատավորի ինքնաբացարկ հայտնելու համար ներկայացված համապատասխան գանգատը, ԲԴԽ-ն ստիպված է եղել մանրակրկիտ քննության ենթարկել գանգատը: Իր որոշման մեջ ԲԴԽ-ն անդրադարձել է այն փաստին, որ Գ.Մ.-ն իր բաժնեմասը հանձնել է հավատարմագրային կառավարման, եւ որ ըստ Դատարանի նախադեպային իրավունքի՝ դատավորների ընդհանուր ժողովի միայն մեկ անդամի կողմնակալությունը չի կարող կասկածի տակ դնել ամբողջ մարմնի անաչառությունը: Այնուամենայնիվ, Դատարանի համար պատճառաբանությունը համոզիչ չէ, ավելին, չի կարողացել ցրել դիմումատուի մտավախությունները՝ Կ.Ա.-ի անաչառության հետ կապված: Մասնավորապես ԲԴԽ-ն միայն անդրադարձել էր դիմումատուի պնդմանը՝ Կ.Ա.-ի կնոջ եւ Գ.Մ.-ի միջեւ տնտեսական կապերի մասով, չտալով որեւէ պատասխան դիմումատուի կոնկրետ փաստարկներին՝ Կ.Ա.-ի եւ Գ.Մ.-ի մտերիմ անձնական հարաբերությունների վերաբերյալ, եւ ըստ այդմ, Կ.Ա.-ի՝ կոնկրետ գործով կայացված որոշումների վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ:

139. Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ Կ.Ա.-ն եղել է ութնոգանոց ընդհանուր ժողովի անդամներից միայն մեկը, որն ընդունել է դիմումատուի գործի ելության վերաբերյալ միաձայն որոշում (տե՛ս 18-րդ եւ 131-րդ պարբերությունները), Դատարանը նկատել է հետեւյալը: Դատարանը նախկինում

գտել էր, որ այն փաստարկը, որ ընդհանուր ժողովի անդամը, որը կարող է կողմնակալություն դրսեւորել, ընդգրկված է մի քանի անդամներից բաղկացած ընդհանուր ժողովի կազմում, որոշիչ չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված օբյեկտիվ անաչառության հարցում, քանի որ հաշվի առնելով քննարկումների գաղտնիությունը՝ անհնար է հաստատել համապատասխան դատավորի իրական ազդեցությունը ժողովի անդամների կողմից ընդունված որոշման վրա (տե՛ս վերելում հիշատակված՝ *Մորիսի [Morice]*, § 89, *Ֆազլի Ասլաների [Fazlı Aslaner]*, § 41, *Սիգրիդուր Էլին Սիգվոլդսոնը ընդդեմ Իսլանդիայի [Sigríður Elín Sigfúsdóttir v. Iceland]*, թիվ 41382/17, § 57, 2020 թվականի փետրվարի 25, *Ստոյմենովիչի եւ Միլոշեվիչի [Stoimenovikj and Miloshevikj]*, §39, եւ *Կերարի [Karrar]* գործերը, § 36, տե՛ս նույնանման *Միտրինովսկին ընդդեմ Սակեդոնիայի նախկին Հարավսլավիական Հանրապետության [Mitrinovski v. the former Yugoslav Republic of Macedonia]* գործերը, թիվ 6899/12, § 46, 2015 թվականի ապրիլի 30): Սույն գործով Կ.Ա.-ն եղել է ԲԴԽ-ի նախագահող դատավորը եւ դիմումատուի գործով զեկուցողը, որը գլխավորել է քննարկումները (տե՛ս վերելում՝ 16-րդ պարբերությունը), ինչը լրացուցիչ հանգամանք է, որն անհամատեղելի է անաչառության արտաքին հատկանիշի հետ (համեմատի՛ր վերելում հիշատակված՝ *Ֆազլի Ասլաների [Fazlı Aslaner]* գործը, § 41):

140. Դատարանը հաշվի է առնում այն փաստը, որ «*Ռուսթավի 2 հեռարձակող ընկերություն*» ՍՊԸ-ի եւ *այլոց [Rustavi 2 Broadcasting Company Ltd and Others]* գործով (վերելում հիշատակված, § 363), որի վրա հիմնվել է ԲԴԽ-ն եւ Կառավարությունը (տե՛ս վերելում՝ 18-րդ եւ 131-րդ պարբերությունները) գտել է, որ դիմումատուների կողմից Գերագույն դատարանի նախագահին ուղղված բողոքը դիտորդի օբյեկտիվ տեսանկյունից, չի կարելի ասել, որ ազդեցություն է ունեցել այդ դատարանի ինն անդամից բաղկացած ընդլայնված կազմի վրա, հատկապես, երբ դատական կազմը այդ գործի վերաբերյալ որոշում է կայացրել միաձայն քվեարկությամբ: Այնուամենայնիվ, սույն գործով Դատարանը, ի թիվս այլնի, հաշվի է առել այն փաստը, որ Գերագույն դատարանի նախագահին ինքնաբացարկ հայտնելու դիմումատուների խնդրանքը այդ դատարանի կողմից լուրջ քննարկման է դրվել՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների համաձայն (վերելում հիշատակված՝ «*Ռուսթավի 2 հեռարձակող ընկերություն*» ՍՊԸ-ի եւ *այլոց [Rustavi 2 Broadcasting Company Ltd and Others]* գործը, § 363)՝ ի

տարբերություն սույն գործի:

141. Վերջապես, Կառավարությունն անդրադարձել է Բանգալորյան սկզբունքներին (տե՛ս վերելում 131-րդ պարբերությունը), եւ այդ կապակցությամբ Դատարանը նշում է, որ համաձայն այն ժամանակ գործող ներպետական իրավունքի՝ ԲԴԽ-ն կարող էր շարունակել աշխատանքը, եթե նրա անդամների կեսից ավելին (այսինքն՝ առնվազն վեց անդամ) ներկա գտնվեին նիստին, եւ դատավորի կարգապահական պատասխանատվության մասին որոշումը կայացվեր ձայների պարզ մեծամասնությամբ: Այսպիսով, Կ.Ա.-ի հայտնած ինքնաբացարկը դեռեւս թույլ կտա ԲԴԽ-ին քննել դիմումատուի գործը եւ որոշում կայացնել այդ առնչությամբ: Կառավարությունը չի անդրադարձել ԲԴԽ-ի գործունեության դժվարություններին՝ կապված Գ.Մ.-ի կողմից ներկայացված գործի քննությունից Կ.Ա.-ին հեռացնելու հետ (տե՛ս վերելում 131-րդ պարբերությունը): Ավելին, Դատարանն ընդգծում է արտաքին հատկանիշի կարեւորությունը՝ օբյեկտիվ անաչառության եւ հետեւաբար արդարադատության համակարգի նկատմամբ վստահության ապահովման նպատակով:

142. Սույն գործով սերտ հարաբերություններն այն ժամանակ նախագահող դատավոր Կ.Ա.-ի եւ արդարադատության նախարար Գ.Ա.-ի միջեւ (որոշ ֆինանսական եւ քաղաքական հետեւանքներով) հատում էին նրանց՝ որպես նախկին գործընկերների ուղղակի ընկերական հարաբերությունների սահմանները, եւ այն կարող էր իրավաչափ մտավախություններ առաջացնել Կ.Ա.-ի անաչառության վերաբերյալ, երբ նա ԲԴԽ-ի կազմի անդամ էր: Այնուամենայնիվ, Դատարանը չկարողացավ ցրել դիմումատուի կասկածները՝ Դատարանի նախագահի անաչառության վերաբերյալ: Դատարանը, այսպիսով, գտնում է, որ դիմումատուի կասկածները՝ կապված նախագահող դատավոր Կ.Ա.-ի անաչառության հետ, օբյեկտիվորեն արդարացված էին, եւ որ նրան չի տրամադրվել բավարար ընթացակարգային երաշխիքներ այս առումով: Հաշվի առնելով վերը նշվածը՝ Դատարանի կողմից անհրաժեշտություն չի առաջանում որոշում կայացնել այն հարցի շուրջ, թե արդյոք Կ.Ա.-ն, ըստ դիմումատուի պնդման, ուղղորդել է ԲԴԽ-ի կազմին՝ ընդունելու որոշակի դիրքորոշում իր գործի վերաբերյալ (տե՛ս վերելում 17-րդ եւ 130-րդ պարբերությունները):

143. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-րդ կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՅՈՂՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

144. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանն անհրաժեշտության դեպքում տուժող կողմին արդարացի փոխհատուցում կտրամադրի»:

Ա. Վնասը

145. Դիմումատուն պահանջել է 351,335,076 ՀՀ դրամ՝ որպես նյութական վնասի հատուցում, որում ընդգրկված է մինչև թոշակի անցնելը չստացված աշխատավարձը, ինչպես նաև աշխատանքից ազատվելու հետեւանքով կենսաթոշակի կորուստը: Դիմումատուն պահանջել է 40,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

146. Կառավարությունը վիճարկել է այս պահանջները:

147. Դատարանը կշռում է, որ սույն գործով արդարացի փոխհատուցման շնորհումը կարող է հիմնված լինել միայն այն փաստի վրա, որ դիմումատուն չի օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքներից: Այնուամենայնիվ, Դատարանը չի կարող ենթադրություններ անել, թե ինչ էլք կունենար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ համատեղելի վարույթը, եթե խախտումներ չհայտնաբերվեին: Սույն գործով Դատարանը որեւէ պատճառահետեւանքային կապ չի տեսնում հայտնաբերված խախտման եւ ենթադրյալ նյութական վնասի միջեւ, հետեւաբար այն մերժում է սույն պահանջը (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Միտրովն ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության* [*Mitrov v. the former Yugoslav Republic of Macedonia*], թիվ 45959/09, § 62, 2016 թվականի հունիսի 2, եւ *Միտրինովսկիի* [*Mitrinovski*] գործերը, § 56):

148. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը վերահաստատում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում արձանագրելու դեպքում հատուցման ամենահարմար ձեւ կլիներ երաշխավորել, որ հնարավորինս վերականգնվեր այն դիրքը, որում դիմումատուն կգտնվեր, եթե սույն դրույթի պահանջները

չանտեսվեին: Դատարանը գտնում է, որ այս սկզբունքը կիրառելի է նաեւ սույն գործով: Հետեւաբար Դատարանը գտնում է, որ հատուցման առավել նպատակահարմար ձեւը կլինի վարույթի վերսկսումը՝ համաձայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի, եթե դիմումատուն այդպես պահանջի՝ Դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն (տե՛ս վերելում՝ 50-րդ պարբերությունը): Միեւնույն ժամանակ, որոշում կայացնելով արդարության սկզբունքի հիման վրա, Դատարանը դիմումատուին շնորհում է 3,600 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

149. Դիմումատուն դատարանում՝ վարույթների շրջանակներում, իր իրավաբանական ներկայացուցչության համար պահանջել է նաեւ 5,132 եվրո, որը, ըստ նրա, համարժեք է 2,150,000 ՀՀ դրամի: Դիմումատուն նաեւ պահանջել է 52,708 ՀՀ դրամ՝ սույն վարույթների շրջանակներում առաջացած փոստային ծախսերի համար:

150. Կառավարությունը վիճարկել է, որ իրավաբանական ծառայությունների վճարների մասով դիմումատուի պահանջները չափազանցված են: Նա նաեւ չի ներկայացրել բավարար տեղեկություններ իր իրավաբանի կատարած աշխատանքի, մասնավորապես՝ ժամերի քանակի եւ ժամավճարի վերաբերյալ: Ինչ վերաբերում է փոստային ծախսերին, նրանք պնդում էին, որ դիմումատուն չի ապացուցել, որ պահանջվող գումարը վերաբերում է սույն գործին:

151. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվում է, որ դրանք փաստացի կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ռամոս Նունես դե Կարվալիո Է Սայի [Ramos Nunes de Carvalho e Sá]* գործը, § 227, սկզբում): Դատարանը գտնում է, որ դատարանում կրած դատական ծախսերը պարտադիր կերպով կատարվել են հայտնաբերված խախտման համար փոխհատուցում ապահովելու համար եւ հիմնավորվել են ծառայությունների մատուցման պայմանագրերով եւ դիմումատուի կողմից ներկայացված վճարման անդորրագրերի պատճեններով: Այնուամենայնիվ, Դատարանը վերահաստատում է, որ դատական ծախսերը հատուցելի են միայն այնքանով, որքանով դրանք վերաբերում են հայտնաբերված

խախտմանը: Հետեւաբար դիմումատուի կողմից պահանջված դատական ծախսերը չեն կարող ամբողջությամբ փոխհատուցվել, քանի որ Դատարանը մասամբ մերժել է դիմումատուի բողոքները (տե՛ս, համապատասխան փոփոխություններով, *Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* [Saghatelyan v. Armenia], թիվ 7984/06, § 63, 2015 թվականի հոկտեմբերի 20 եւ *Մնացականյանի* [Mnatsakanyan] գործը, § 10): Այսպիսով, հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող փաստաթղթերը եւ վերոնշյալ չափորոշիչը՝ Դատարանը ողջամիտ է համարում տրամադրել 1 300 եվրո՝ որպես բոլոր պահանջների մասով կրած ծախսերի ու ծախքերի փոխհատուցում՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ: Ինչ վերաբերում է փոստային ծախսերին, ապա համապատասխան հաշիվ-վավերագրից պարզ է դառնում, որ պահանջվող գումարը վերաբերում է դիմումատուի գանգատի եւ սույն գործի շրջանակներում օժանդակ փաստաթղթերի ներկայացմանը: Հետեւաբար դատարանը դիմումատուին շնորհում է 120 եվրո գումար՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Որոշում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության հարցը միացնել դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունք չունենալու վերաբերյալ ըստ եռւթյան բողոքին եւ գտնում է, որ այն կիրառելի է իր քաղաքացիաիրավական հայեցակետով.

2. *Հայտարարում է* գանգատն ընդունելի.

3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Բարձրագույն դատական խորհրդի անկախ չլինելու մասով.

4. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դատարանի մատչելիության իրավունքի բացակայության մասով.

5. *Վճռում է*, որ տեղի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Կ.Ա.-ի անաչառ չլինելու մասով.

6. *Վճռում է՝*

ա) պատասխանող պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ

կետին համապատասխան, վճիռը վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ կյուբական վնասի դիմաց՝ 3,600 եվրո (երեք հազար վեց հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 1,420 եվրո (հազար չորս հարյուր քսան եվրո)՝ գումարած դիմումատուին վճարվող գումարից գանձման ենթակա բոլոր հարկերը.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լումբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

7. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2025 թվականի հունվարի 23-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Քարտուղար՝

Նախագահ՝

Վիկտոր Սոլովեյչիկ

Մաթիաս Գայոմար